2010

ՀՀ կենտրոնական բանկի բանբեր

1-ին եռամսյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսական համակարգը 4

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ 14

Մակրոտնտեսական ցուցանիշները 2010 թ. հունվար – մարտին 22

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 39

ՀՀ միջազգային պահուստների վիճակը և կազմը 40

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնտեսական հետազոտությունների վարչություն

Կ. Պողոսյան, Ա. Մկրտչյան
ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումը DSGE-SVAR մոդելի միջոցով 41

ՀՀ ֆինանսական համակարգը 2010 թվականի առաջին եռամսյակում

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

31.03.2010 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 22 առևտրային բանկեր՝ 389 մասնաճյուղերով:

2010 թվականի առաջին եռամսյակում, տնտեսության ակտիվացմանը զուգընթաց, բանկային համակարգում ևս պահպանվել են նախորդ երկու եռամսյակներում ձևավորված աճի միտումները. ապահովվել է ակտիվների և վարկերի համապատասխանաբար 4.3% և 6.3% աճ:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալն ավելացել է 2.5%-ով (7.0 մլրդ դրամով) և կազմել 285.4 մլրդ դրամ:

Եռամսյակի ընթացքում երկու բանկեր համալրել են կանոնադրական կապիտալը՝ ընդհանուր 4.1 մլրդ դրամի չափով:

Ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը եռամսյակի ընթացքում նվազել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 20.6%, իսկ ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշն աճել է 0.2 տոկոսային կետով և կազմել 28.6%:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Հաշվետու եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր պարտավորությունները ավելացել են 4.8%-ով (50.6 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 98.2 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 15 բանկում, իսկ նվազում՝ 7 բանկում:

Պարտավորությունների կազմում ավելացել են հիմնականում ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ 21.0%-ով (14.2 մլրդ դրամով) և ընդհանուր ավանդները (իրավաբանական և ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային միջոցները)՝ 5.6%-ով (35.2 մլրդ դրամով):

31.03.2010 թ. դրությամբ առևտրային բանկերի ընդհանուր ավանդների մեծությունը կազմել է 662.0 մլրդ դրամ:

Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներն ավելացել են 6.7%-ով (22.7 մլրդ դրամով), իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները՝ 4.3%-ով (12.5 մլրդ դրամով):

Առևտրային բանկերի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ Կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Եռամսյակի ընթացքում պարտավորությունների կազմում որոշակի ավելացել են իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորությունների, ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների և ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԸ


Առևտրային բանկերի ընդհանուր ակտիվները 2010 թ. առաջին եռամսյակում ավելացել են 4.3%-ով (57.6 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 383.6 մլրդ դրամ. 15 բանկում արձանագրվել է ակտիվների աճ, իսկ 7 բանկում՝ նվազում:

Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են բանկերում թղթակցային նոստրո հաշիվները՝ 23.8%-ով (20.4 մլրդ դրամով) և տնտեսությանը տրամադրված վարկերը՝ 6.3%-ով (44.1 մլրդ դրամով):

Իրավաբանական անձանց վարկերն ավելացել են 7.9%-ով (31.4 մլրդ դրամով), ֆիզիկական անձանց վարկերը՝ 4.2%-ով (12.0 մլրդ դրամով), բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 3.2%-ով (0.7 մլրդ դրամով):


31.03.2010 թ. դրությամբ բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը կազմել է 747.5 մլրդ դրամ, որի 57.2%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց, 39.8%-ը՝ ֆիզիկական անձանց, 3.0%-ը՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին:

Առևտրային բանկերի ակտիվների ծավալները




Առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքը

31.12.2009



31.03.2010




1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխատակիցներին
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Առևտրային բանկերի ընդհանուր վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) հաշվետու եռամսյակում ավելացել են 4.3%-ով (34.9 մլրդ դրամով) և կազմել 841.1 մլրդ դրամ: Դրամով վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 3.6%-ով և կազմել 384.4 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 5.0%-ով և կազմել 456.7 մլրդ դրամ: Ընդհանուր վարկային ներդրումներում և դեբիտորական պարտքերում դրամով ներդրումների տեսակարար կշիռը նվազել է 0.3 տոկոսային կետով և կազմել 45.7%:


Ոչ ռեզիդենտներին տրամադրած վարկերը և դեբիտորական պարտքերը նվազել են 14.8%-ով, իսկ ռեզիդենտներին տրամադրած վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 5.9%-ով և համապատասխանաբար կազմել 51.0 մլրդ դրամ և 790.1 մլրդ դրամ:

Ռեզիդենտների վարկերում հիմնականում ավելացել են առևտրի ճյուղին տրամադրված վարկերը (15.5 մլրդ դրամ աճ), ինչի արդյունքում դրանց տեսակարար կշիռը ռեզիդենտների վարկային ներդրումների կառուցվածքում ավելացել է 0.9 տոկոսային կետով:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները ըստ տնտեսության ճյուղերի



Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Առևտրային բանկերի ստանդարտ ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 0.6 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 95.2%-ը: 31.03.2010թ. դրությամբ բանկային համակարգի «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 2.5%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.8%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.5%-ը:

Առևտրային բաների ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը եռամսյակի ընթացքում նվազել է 0.5 տոկոսային կետով, իսկ ընթացիկ իրացվելիության ցուցանիշը՝ 0.4 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել 33.9% և 140.4%:


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

Ըստ բանկային համակարգի վերահսկողական հաշվետվությունների՝ 2010թ. առաջին եռամսյակում ստացված զուտ շահույթը (շահույթը հարկումից հետո) կազմել է 4.2 մլրդ դրամ[1], շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 1.3%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 6.1%: Շահույթով են աշխատել 18 բանկ, վնասով՝ 4 բանկ:

ՖՀՄՄ համաձայն՝ բանկային համակարգի զուտ շահույթը 2010 թվականի առաջին եռամսյակում կազմել է 6.7 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 2.0%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 9.5%:

Առևտրային բանկերն ապահովել են ընդհանուր 55.0 մլրդ դրամ համախառն եկամուտ՝ միաժամանակ իրականացնելով 49.6 մլրդ դրամ համախառն ծախսեր (վերահսկողական հաշվետվությունների հիման վրա): Հաշվետու եռամսյակի վերջին բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 5.4 մլրդ դրամ:

Առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի կառուցվածքը 2010 թ. առաջին եռամսյակում



Առևտրային բանկերի ընդհանուր եկամուտների կազմում տոկոսային եկամուտների 81.1%-ը բաժին է ընկել տնտեսության վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռներ են ունեցել միջնորդավճարներից և արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտները, որոնք համապատասխանաբար կազմել են 46.6% և 33.3%:

Առևտրային բանկերի ծախսերի կազմում տոկոսային ծախսերի զգալի՝ 52.2%-ը, բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին: Ոչ տոկոսային ծախսերի 42.9%-ը բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին:

Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր զուտ մասհանումների մեծությունը (4.6 մլրդ դրամ) կազմել է ընդհանուր ակտիվների 0.3%-ը:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2010 թվականի առաջին եռամսյակում վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա է ստացել «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ն:

31.03.2010թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել է 28 վարկային կազմակերպություն՝ 56 մասնաճյուղերով:

---


[1] ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՄ համաձայն՝ շահույթի մեծությունների խոշոր տարբերության հիմնական պատճառը ստանդարտ ակտիվների 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելն է, քանի որ բանկերը այդչափով են ծախս ճանաչում:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում ավելացել են 11.9%-ով (9.0 մլրդ դրամով) և կազմել 84.8 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 26, իսկ նվազում՝ 2 վարկային կազմակերպությունում:


2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրած վարկերի և լիզինգի ընդհանուր ծավալը ավելացել է 5.1%-ով կամ 2.5 մլրդ դրամով և կազմել 52.9 մլրդ դրամ: Դրամով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալը ավելացել է 7.1%-ով (1.9 մլրդ դրամով), արտարժույթով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալը նվազել է 2.8%-ով (0.7 մլրդ դրամով): Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ավելացել են 5.8%-ով և կազմել 33.8 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց տրամադրված վարկերը ավելացել են 7.1%-ով և կազմել 12.8 մլրդ դրամ: Լիզինգի ծավալը նվազել է 7.6%-ով՝ կազմելով 4.9 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալը ավելացել է 9.1%-ով (5.9 մլրդ դրամով)՝ կազմելով 71.1 մլրդ դրամ: Եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներում ավելացել են գյուղատնտեսության, շինարարության ճյուղերի և ֆինանսական հատվածին տրամադրված վարկերի տեսակարար կշիռները:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները ըստ տնտեսության ճյուղերի



Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում «ստանդարտ» վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը նվազել է 0.3 տոկոսային կետով և կազմել 95.6%: 31.03.2010թ. դրությամբ վարկային կազմակերպությունների «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 2.8%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.0%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.6%-ը:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 11.5%-ով (3.0 մլրդ դրամով) և կազմել 29.3 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալը ավելացել է 3.0 մլրդ դրամով՝ պայմանավորված այս շուկա «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ-ի մուտքով:

Ըստ վարկային կազմակերպությունների վերահսկողական հաշվետվությունների՝ հաշվետու եռամսյակում ստացված զուտ շահույթը կազմել է 72 մլն դրամ: Տարեսկզբից շահույթով է աշխատել 23 վարկային կազմակերպություն, իսկ վնասով՝ 5 վարկային կազմակերպություն:

ՖՀՄՄ համաձայն՝ վարկային կազմակերպությունների զուտ շահույթը 2010 թվականի առաջին եռամսյակում կազմել է 1.2 մլրդ դրամ:

Ընդհանուր պարտավորությունները ավելացել են 12.1%-ով (6.0 մլրդ դրամով) և տարեվերջի դրությամբ կազմել 55.6 մլրդ դրամ: Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները ավելացել են 3.0 մլրդ դրամով, ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունները՝ 3.0 մլրդ դրամով և 1.8 մլրդ դրամով, ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները ՝ 1.1 մլրդ դրամով:

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը 31.03.2010 դրությամբ


Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[1] 2010 թվականի առաջին եռամսյակի վերջին կազմել են 450.3 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 462.1 մլն դոլարի փոխարեն: 2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 91.9 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 86.9 մլն դոլար հիմնական գումարի մարումներ[2]:

2010 թվականի առաջին եռամսյակի վերջին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Ռուսաստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 13.5 % (նախորդ եռամսյակում՝17.4 %), Լյուքսեմբուրգը՝ 11.8 % (նախորդ եռամսյակում՝ 6.5%), Ֆրանսիան՝ 11.8 % (նախորդ եռամսյակում՝ 11.5 %), Գերմանիան՝ 9.9 % (նախորդ եռամսյակում՝ 9.7 %), Լատվիան՝ 7.1 % (նախորդ եռամսյակում՝ 6.8 %): Վարկերի մոտ 22 %-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից[3]:

Բանկերը և վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավված վարկերը հիմնականում տեղաբաշխել են տնտեսության հետևյալ հատվածներում՝ 156 մլն դոլարը՝ ֆինանսական, 84 մլն դոլարը՝ արդյունաբերության, 72 մլն դոլարը՝առևտրի և 46 մլն դոլարը՝սպառողական և հիփոթեքային վարկերի:

2010 թվականի առաջին եռամսյակի վերջին ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ տարվա վերջի համեմատ չի փոփոխվել և կազմել է 5.7 %: Արտաքին վարկերի մոտ 66.9 %-ը լողացող (LIBOR, EURIBOR, ԿԲ ՊՊ) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 4.8 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը նվազել է և կազմել ներգրավված վարկերի 3.4 %-ը՝ նախորդ եռամսյակի վերջի 7.4 %-ի փոխարեն:

ՀՀ առևտրային բանկերի արտաքին մասնավոր պարտքը 2003 – 2010 թթ.



[1] *Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:*

[2] *Նախորդ ժամանակահատվածում և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում զուտ ներգրավված միջոցների գումարը տարբերվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի փաստացի ցուցանիշից, քանի որ ներգրավված միջոցներն արտահայտված են տարբեր արժույթներով, ինչի հետևանքով դրանք դոլարային համարժեքի վերածելիս պարունակում են փոխարժեքի հաշվին վերագնահատումները:*

[3] *Նախորդ հրապարակումներում միջազգային կազմակերպություններից ստացված վարկերը ներառել են նաև որոշ ոչ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված միջոցները, որոնք հաշվետու եռամսյակում վերադասակարգվել են:*

Վարկային կազմակերպությունների պարտավորությունների կազմում 31.03.2010թ. դրությամբ բանկերի նկատմամբ պարտավորությունները կազմել են 21.8 մլրդ դրամ, այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները՝ 13.1 մլրդ դրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունները՝ 13.3 մլրդ դրամ, ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ 5.1 մլրդ, այլ պարտավորությունները՝ 2.3 մլրդ դրամ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.03.2010 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել են 12 ապահովագրական ընկերություններ[2]:

Հաշվետու եռամսյակում ապահովագրական ընկերությունների ակտիվները նվազել են 1.0%-ով՝ 31.03.2010 թ. դրությամբ կազմելով 16.8 մլրդ դրամ, պարտավորությունները նվազել են 2.1%-ով՝ կազմելով 4.6 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալը նվազել է 0.6%-ով՝ կազմելով 12.2 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կառուցվածքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմել բանկերում ավանդները (64.7%), ուղղակի ապահովագրության գծով ապահովադիրներից ստացվելիք գումարները (9.7%) և բանկային հաշիվները (6.9%):

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների կառուցվածքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմել չվաստակած ապահովագրավճարների պահուստը (48.2%) և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարները (19.6%):

Ըստ ապահովագրական ընկերությունների վերահսկողական հաշվետվությունների՝ 2010 թվականի առաջին եռամսյակում շահույթը (հարկումից հետո) կազմել է 362.6 մլն դրամ: Շահույթով են աշխատել 9, իսկ վնասով՝ 2 ընկերություն: Շահույթով աշխատած ընկերությունների շահույթը կազմել է 732.9 մլն դրամ:

ՖՀՄՄ համաձայն՝ ապահովագրական ընկերությունների զուտ շահույթը 2010 թվականի առաջին եռամսյակում կազմել է 712 մլն դրամ:

2010 թվականի առաջին եռամսյակում հաշվեգրվել է 1.9 մլրդ դրամ ապահովագրավճար, իսկ վերաապահովագրողին փոխանցվել է 569.1 մլն դրամ կամ ապահովագրավճարների 30.0%-ը:

Ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 354.6 մլն դրամ, իսկ ապահովագրական հատուցումների գծով վերաապահովագրողներից ստացվել է 114.4 մլն դրամ կամ ապահովագրական հատուցումների 32.2%-ը:

31.03.2010 թ. դրությամբ ապահովագրական ընկերություններն ունեցել 48.6 հազար գործող ապահովագրության պայմանագիր, որոնց գծով ապահովագրական գումարների մեծությունը կազմել է 3.34 տրլն դրամ: Ապահովագրական գումարներից վերաապահովագրողներին փոխանցված ռիսկերի վերաապահովագրական գումարների մեծությունը կազմել է 2.9 տրլն դրամ կամ ապահովագրական գումարների 86.8%-ը:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ


2010 թվականի մարտի 31-ի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություններ մատուցող 22 բանկ և 8 ներդրումային ընկերություն, ընդ որում՝ բոլոր ութ ընկերությունները կարող են իրենց կամ հաճախորդի անունից և իրենց կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել: Ներդրումային ութ ընկերությունները կարող են նաև հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել, հինգը՝ արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն և երեքը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում:

31.03.2010թ. դրությամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվները կազմել են 13.9 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ նվազելով 10.8%-ով: Ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալը եռամսյակի ընթացքում նվազել է 0.5%-ով՝ կազմելով 2.9 մլրդ դրամ:

[2] Ներկայացված են 11 ապահովագրական ընկերությունների ցուցանիշները, քանի որ Լոնդոն-Երևան ընկերությունը 2010 թվականի առաջին եռամսյակի համապատասխան հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ չի ներկայացրել:

ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված արժեթղթերի առքուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 22.5%-ով՝ կազմելով 50.4 մլրդ դրամ, կորպորատիվ պարտատոմսերով իրականացված գործառնությունների ծավալը նվազել է 73.5%-ով և կազմել 1.6 մլրդ դրամ, բաժնետոմսերով առք ու վաճառքի գործառնությունների ծավալը նվազել է 33.5%-ով՝ կազմելով 1.8 մլրդ դրամ, պետական պարտատոմսերով առքուվաճառքի գործառնությունների ծավալը նվազել է 16.3%-ով՝ կազմելով 47.0 մլրդ դրամ: 2010թ. առաջին եռամսյակի արդյունքներով՝ ՀՀ արժեթղթերի շուկայի շրջանառության մեջ գերակշռել են պետական պարտատոմսերով գործառնությունները, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր շրջանառության մեջ կազմել է 93.2%: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով իրականացված գործառնությունների տեսակարար կշիռներն ընդհանուր շրջանառության մեջ համապատասխանաբար կազմել են 3.2% և 3.6%:

Ներդրումային ընկերությունների կողմից 2010 թ. իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալները



Պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների մեջ գերակշռել են պետական միջին ժամկետայնության պարտատոմսերով իրականացված գործառնությունները (70%, նախորդ եռամսյակում՝ 77%): Պետական կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերով գործառնությունների տեսակարար կշիռները կազմել են ընդհանուր շրջանառության համապատասխանաբար 20%-ը և 10%-ը (նախորդ եռամսյակում՝ համապատասխանաբար 20%-ը և 3%-ը):

Եռամսյակի ընթացքում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առքուվաճառքի գործառնությունները կազմել են ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված առքուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 16.7%-ը:

Կարգավորվող շուկայում իրականացված գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 36%-ով և կազմել 4.2 մլրդ դրամ, ընդ որում՝ շրջանառության 58%-ը կազմել են ռեպո գործառնությունները, 7.2%-ը՝ կորպորատիվ պարտատոմսերի և 24.7%-ը՝ պետական պարտատոմսերի առքուվաճառքի գործառնությունները:

Ներդրումային գործառնությունների շրջանակներում կարգավորված շուկայից դուրս իրականացված գործառնությունների 89%-ը կազմել են ներդրումային ծառայություններ մատուցող առևտրային բանկերի կողմից իրականացված գործառնությունները, 11%-ը՝ ներդրումային ընկերությունների կողմից իրականացված գործառնությունները:

Ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (ներառյալ կարգավորվող շուկայում իրականացված ռեպո գործառնությունները) նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 16%-ով և կազմել 539 մլրդ դրամ, որից 219.5 մլրդ դրամը կազմել են երկարաձգված գործարքները:

31.03.2010թ. դրությամբ հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը կազմել է 2.0 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ ավելանալով 4%-ով:

31.03.2010թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 1552 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը կազմել է 124092 մարդ:

31.03.2010թ. դրությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել 17 թողարկողների արժեթղթեր: Թողարկողներից 4-ը բանկ են: Ընդ որում, 11-ը թողարկել են բաժնետոմսեր (30.1 մլրդ դրամ ընդհանուր ծավալով), իսկ 7-ը՝ պարտատոմսեր (3.7 մլրդ դրամ ընդհանուր ծավալով): «Արարատ բանկ» ԲԲԸ-ն թողարկել է ինչպես բաժնային, այնպես էլ պարտքային արժեթղթեր: Թողարկված պարտքային արժեթղթերի 13%-ը բաժին է ընկել տնտեսության ֆինանսական հատվածում գործունեություն ծավալող ընկերություններին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոփոխություններ են կատարվել մի շարք իրավական ակտերում:

Բանկային շուկայի կարգավորման դաշտում փոփոխություններ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում, մասնավորապես՝

- Սահմանվել է, որ բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում իրականացվող պարտադիր պահուստավորումը, որը կազմում է ներգրավված միջոցների առնվազն 12 տոկոսը, այսուհետ 3%-ով պետք է իրականացվի ՀՀ դրամով, իսկ 9%-ով՝ համապատասխան արտարժույթով:
- ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը շարունակելու են հաշվարկել արտարժույթի տնօրինման նորմատիվ, որը մինչև սույն թվականի օգոստոսի 1-ը՝ բոլոր արտարժույթների երկար դիրքերի հանրագումարի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունն է (10%), իսկ 2010 թվականի օգոստոսի 1-ից լինելու է բանկի արտարժութային համախառն դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը (10%): Մինչև 2010 թվականի հուլիսի 31-ը բանկերը, ըստ առանձին արտարժույթների, հաշվարկելու են յուրաքանչյուր արտարժույթի երկար դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը (7%), իսկ 2010 թվականի օգոստոսի 1-ից՝ յուրաքանչյուր արտարժույթի բաց դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը (7%):
- Սահմանափակվել է բանկի չբաշխված շահույթի տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալի հաշվարկում: Բանկի չբաշխված շահույթը բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում պետք է ներառվի բանկի կանոնադրական կապիտալի առավելագույնը 150 տոկոսի չափով:
- Սահմանվել է, որ բանկի հիմնական կապիտալից պետք է նվազեցվեն նաև ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների կապիտալներում կատարված ներդրումները, եթե դրանք գերազանցում են սահմանված սահմանաչափերը:
- Սահմանվել է, որ Ն3 նորմատիվը չի հաշվարկվելու Կառավարության նկատմամբ:
- Կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկում արտարժութային ակտիվների համար սահմանվել են ավելի խիստ ռիսկի կշիռներ, քան նմանատիպ դրամային ակտիվների համար (մասնավորապես՝ դրամային վարկերի համար սահմանված 50, 75 և 100% ռիսկի կշիռները արտարժութային վարկերի համար սահմանվել են համապատասխանաբար 75, 110 և 150%):

Ակնկալվում է, որ կատարված փոփոխությունների արդյունքում տեղի կունենա բանկային գործունեության կարգավորման դաշտի համապատասխանեցում բանկային համակարգի ռիսկայնության մակարդակին:

Արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտում նույնպես փոփոխություններ են կատարվել.

1. ՀՀ ԿԲ խորհրդի 2010 թ. հունվարի 19-ի թիվ 2-Ն որոշմամբ հաստատվել է «Արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագրի կազմը, առաջարկի և դրա պայմանների փոփոխությունների հրապարակման կարգը, առաջարկի շուկայական գնի հաշվարկման կարգը, արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկի իրականացման կարգը արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրի թույլտվության դադարեցման դեպքում, արժեթղթերը հանձնելու առաջարկն ընդունելու կամ մերժելու

մասին ցանկացած հրապարակային առաջարկության կամ խորհրդի կատարման կարգը» կանոնակարգ 4/10-ը, որով կսահմանվեն արժեթղթերը հանձնելու առաջարկը կարգավորող այնպիսի կանոններ, որոնք լավագույնս կպաշտպանեն տվյալ արժեթղթերի սեփականատերերի շահերը և հնարավորինս համահունչ կլինեն Եվրոմիության չափանիշներին:

2. ՀՀ ԿԲ նախագահի 2010թ. փետրվարի 24-ին թիվ 1/139Ա որոշմամբ հաստատվել է «Ներդրումային ընկերություններում ստուգումների իրականացման» ձեռնարկը, որը հնարավորություն կընձեռի ապահովելու ներդրումային ընկերություններում ամբողջական և համակողմանի ստուգումների, վերահսկողների կողմից ներդրումային ընկերություններում կատարված ստուգումների ընթացքում անհրաժեշտ նվազագույն գործընթացների իրականացումը, տարբեր վերահսկողների կողմից ստուգումների իրականացման, ստուգման արդյունքների ամփոփման, ստուգման արդյունքների փաստաթղթավորման միասնական մոտեցումների կիրառումը: Բացի այդ, ձեռնարկի նպատակն է ձևավորել ներդրումային ընկերությունում ստուգման արդյունքների գնահատման արդյունավետ համակարգ՝ ըստ ստուգման առանձին բաժինների, ինչը հնարավորություն կտա մեկ աղյուսակում ներառված գնահատականների միջոցով ամբողջական պատկերացում կազմել, թե ներդրումային ընկերության որ բնագավառներն են առավել ռիսկային, որ ոլորտներում խնդիրներ ու թերություններ կան և, ըստ այդմ, նախատեսել ռիսկերի կանխարգելմանը, խնդիրների և թերությունների վերացմանը նպատակաուղղված վերահսկողական միջոցառումներ:

3. ՀՀ ԿԲ խորհրդի 2010թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ում: Նշված փոփոխությունները և լրացումները հիմնականում կապված են.
   - ներդրումային ընկերությունների համար կապիտալի համարժեքության նոր նորմատիվի սահմանման հետ, ինչով պայմանավորված՝ կանոնակարգը համալրվել է կապիտալի համարժեքության նորմատիվի վերաբերյալ նոր հաշվետվական աղյուսակներով:
   - IOSCO-ի սկզբունքներին հնարավորինս համապատասխանելու հետ, որի արդյունքում սահմանվել է դրույթ, համաձայն որի՝ ներդրումային ընկերությունները կտեղեկացնեն ԿԲ-ին իրենց նորմատիվային ընդհանուր կապիտալի՝ որոշակի չափից նվազման վերաբերյալ:


Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2010 թ. առաջին եռամսյակում

2010 թ. առաջին եռամսյակում ՀՀ տարածքում բանկային համակարգով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 2956 մլրդ դրամ (քանակը՝ 1642319), ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 2100 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 675826: 2010 թ. առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել է 12%-ով (283 մլրդ դրամով), իսկ քանակը ավելացել է 20%-ով (112982-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված փոխանցումների ծավալը 2009 թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 22%-ով (596 մլրդ դրամով), իսկ քանակը նվազել է 156826-ով (19 %-ով):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը (առանց բորսայական գործառնությունների) կազմել է մոտ 33 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 10560: Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված միջին օրական փոխանցումների ծավալը կազմել է 148 մլրդ դրամ (ավելացել է 52%-ով):

2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) ավելացել է Գանձապետարանի նախածեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումների տեսակարար կշիռը, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 44%-ը, քանակի 52%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախածեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելացել է 40%-ով (253 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 67170-ով (24%-ով): 2009 թ. չորրորդ եռամսյակի համեմատ այս վճարումների ծավալը նվազել է 26%-ով (307 մլրդ դրամով):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



2010 թ. առաջին եռամսյակում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 106 մլրդ դրամի 2301660 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 7.6 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 1.7 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 0.5 մլրդ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 1.2 մլրդ դրամ): Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 612419, որը 2009 թ. չորրորդ եռամսյակի վերջի համե-

մատությամբ ավելացել է 5.7%-ով (32988 քարտով): Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է քարտային գործառնությունների մոտ 7%-ը: Ընդհանուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 16.5%-ով (1.1 մլրդ դրամով):

2010 թ. առաջին եռամսյակում առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական ստացումները նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 18%-ով[1] և կազմել 102 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը ավելացել է 22%-ով և կազմել 53 մլրդ դրամ: Արդյունքում՝ ֆիզիկական անձանց ուղղված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 49 մլրդ դրամ (նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 6 մլրդ դրամով):


Վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և միաժամանակ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև առևտրային բանկերի հետ համագործակցելու արդյունքում մատուցված ծառայությունների դիմաց հավաքագրված միջոցները կազմել են 5.2 մլրդ դրամ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2010 թ. առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 60%-ը, քանակի՝ 94.8%-ը: Էլեկտրոնային վճարումների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 28%-ով (275 մլրդ դրամով), իսկ քանակը ավելացել է 21%-ով (110705-ով): Առևտրային բանկերի կողմից էլեկտրոնային վճարումների համակարգով (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կատարված վճարումները կազմել են բանկերի վճարումների ծավալի մոտ 77%-ը (2009 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 33%-ով), իսկ քանակի՝ մոտ 99.6%-ը:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2009 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1730-ով՝ կազմելով 10015, իսկ ծավալը ավելացել է 4 մլրդ դրամով՝ կազմելով 19 մլրդ դրամ: Բորսայական գործառնությունների իրականացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում կատարված փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 148 մլրդ դրամ (ավելացել է 51 մլրդ դրամով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները (առանց բորսայական փոխանցումների)




[1] *Հաշվի առնելով արտարժույթի փոխարժեքի տատանումները՝ հաշվարկված ցուցանիշները ԱՄՆ դոլարով արտահայտելիս (ըստ յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքի) 2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց ուղղված դրամական ստացումները նախորդ տարվա համեմատ գրեթե պահպանել են նույն մակարդակը:*

Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե պահպանվել է նույն մակարդակի վրա և կազմել է 2 մլն դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգով առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը կազմել 1.9 մլրդ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են վճարումների քանակի 0.08%-ը, ծավալի 0.026%-ը (498 փոխանցում՝ 2.8 մլրդ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.07%-ը, ծավալի 0.025%-ը (458 փոխանցում՝ 2.7 մլրդ դրամ ծավալով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված միջին օրական փոխանցումները



ՀԱՄԱԽՍՈՒՆ ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված վճարումների ծավալի 32.81%-ը, քանակի 5%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծավալը նվազել է 48%-ով, իսկ քանակը ավելացել է 1%-ով):

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով*		Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներ	
	էլեկտրոնային*		թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2009										
I եռ.	989806	530280	1333397	31860	59875	704	2383078	562844	6248937	4842
տեսակարար կշիռը վճարումներում (%)	41.54	94.21	55.95	5.66	2.51	0.13	100	100		
II եռ.	1260960	594690	1543120	31625	88900	924	2892981	627239	8021865	4499
տեսակարար կշիռը վճարումներում (%)	43.59	94.81	53.34	5.04	3.07	0.15	100	100		
III եռ.	2121563	679249	1410056	34893	154334	1044	3685953	715186	8675669	5429
տեսակարար կշիռը վճարումներում (%)	57.56	94.98	38.25	4.88	4.19	0.15	100	100		
IV եռ.	1617979	789849	927797	41912	150323	891	2696098	832652	9242227	5689
տեսակարար կշիռը վճարումներում (%)	60.012	94.86	34.41	5.03	5.58	0.11	100	100		
Ընդամենը	5990307	2594068	5214370	140290	453432	3563	11658110	2737921	32188698	20459
տեսակարար կշիռը վճարումներում (%)	51.38	94.75	44.73	5.12	3.89	0.13	100	100		

2010										
Ի եռ.	1262858	640985	688950	33795	148297	1046	2100105	675826	9496297	4963
տեսակարար կշիռը վճարումներում (%)	60.13	94.84	32.81	5.00	7.06	0.15	100	100		

** Առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների:*

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 528 փոխանցում՝ 11 մլրդ դրամ ծավալով (2009 թ. առաջին եռամսյակի համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը նվազել է 10 մլրդ դրամով), իսկ մեկ թղթային փոխանցման միջին ծավալը նվազել է մոտ 21 մլն դրամով և կազմել է 20 մլն դրամ: Համախառն թղթային վճարումների համակարգով փոխանցումները հիմնականում վերաբերում են կնքված ռեպո գործառնություններին:

2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 4 մլրդ դրամ ծավալով 20 փոխանցում:

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 5 գործակալ և 17 դիլեր բանկեր, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, «ՆԱՍԴԱՔ Օ-ԷՄ-ԷՔՍ-Արմենիա» ԲԲԸ-ն, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների նախարարությունը (պետական պարտատոմսերի թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով և Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի թողարկողի կարգավիճակով):

Համակարգի կողմից պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 454 հանձնարարական՝ մոտ 39 մլրդ դրամ ծավալով, ինչը 2009 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելի է 5 մլրդ դրամով (արժեթղթերի տեղաբաշխման հետ կատարված վճարումները ավելացել են 5.5 մլրդ դրամով, իսկ արժեթղթերի մարման հետ կապված վճարումները նվազել են 0.5 մլրդ դրամով): Ընդ որում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց մասնակիցների կողմից կատարվել է 18 մլրդ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 21 մլրդ դրամի փոխանցում: Ընդ որում՝ «Գանձապետական պահառու» համակարգի միջոցով պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 375 մլն դրամի վճարում, որտեղ մոտ 66 մլն դրամը կազմել են արժեթղթերի տեղաբաշխման և մոտ 309 մլն դրամը՝ արժեթղթերի մարման դիմաց վճարումները:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման հետ կապված գործառնություններ չեն իրականացվել:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից երկրորդային շուկայում արժեթղթերով կատարված առք ու վաճառքի գործառնությունների դիմաց (առաքում՝ վճարման դիմաց սկզբունքով) իրականացվել է 109 մլրդ դրամի 592 փոխանցում: Նշված ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է 86 մլրդ դրամով: Համակարգի միջոցով կատարված ազատ առաքման գործառնությունները անվանական արժեքով կազմել են 202 մլրդ դրամ, իսկ գրավադրման հետ կապված գործառնությունները՝ 51 մլրդ դրամ:

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին վճարային քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 20 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու ժամանակահատվածում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 34 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 736: Այդ թվում՝ «ԱրՔա» վճարային քարտերի սպասարկումը իրականացվում է 677 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրված POS - տերմինալների ընդհանուր քանակը կազմել է 2815, որից 446-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել է 25:

ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող (սպասարկող) քարտերի տեսակները


Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնեսբանկ	+	+	+		
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+	+			
Ամերիաբանկ	+	+	+		
ՎՏԲ-Հայաստան բանկ	+		+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			
ԲՏԱ բանկ	+	+			
Զարգացման հայկական բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+	+	+		+
Ինեկոբանկ	+	+			
Մելլաթ բանկ	+				
Բիբլոս բանկ Արմենիա	+	+			
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	+	+	+	+	
Արցախբանկ	+	+			
Կասկադ բանկ	+	+			
Առէկսիմբանկ-Գազպրոմբանկ	+	+	+	+	
Յունիբանկ	+	+	+		
Արդշինինվեստ բանկ	+	+	+		
Արմսվիսբանկ					
ՊրոԿրեդիտ բանկ			+		

2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը նախորդ եռամսյակի վերջի համեմատ ավելացել է 3.5%-ով (9926 քարտով) և կազմել 292090: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակը ավելացել է 7.8%-ով (23062 քարտով). VISA-ն ավելացել է 4.3%-ով (8647 քարտով) և կազմել 210236, իսկ MasterCard-ը՝ 25.8%-ով (15769 քարտով) և կազմել 76877: Միջազգային այլ քարտերի քանակը նվազել է 3.9%-ով (1354 քարտով):

Քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2009 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 25%-ով (21.3 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 28%-ով (508197):

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 1128175 գործառնություն՝ 43 մլրդ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է մոտ 38%-ով (12 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 44%-ով (345052-ով):

«ԱրՔա» քարտերի զարգացման դինամիկան



VISA քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 39 մլրդ դրամ (689353 գործառնություն), իսկ MasterCard-ով իրականացվել է 14.6 մլրդ դրամ ծավալով 279803 գործառնություն: VISA համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2009 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 26.9%-ով (8 մլրդ դրամ), MasterCard-ով կատարված գործառնությունների ծավալը՝ 9.6%-ով (1.3 մլրդ դրամ), իսկ միջազգային այլ քարտերով իրականացվել է 204329 գործառնություն՝ 9 մլրդ դրամ ծավալով, որը ավելի է 1.5 մլրդ դրամով:


Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները (2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում)

Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	*քանակը*	*այդ թվում՝ «ՄրՔա» քարտերով*	
			ծավալը (մլն դրամ)	*քանակը*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	84457	1981253	37425	994462
այդ թվում՝ անկանխիկ	497	12904	33	5726
POS – տերմինալների/իմպրինտերների միջոցով	20384	258898	5542	106901
այդ թվում՝ անկանխիկ	5416	159118	2055	55002
Ինտերնետ միջավայրում	1691	61772	501	26812
Ընդամենը	106532	2301923	43468	1128175
այդ թվում՝ անկանխիկ	7604	233794	2589	87540

2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված գործառնությունների միջին օրական ծավալը կազմել է 1183 մլն դրամ, իսկ քանակը՝ 25574: Գործառնությունների միջին օրական քանակը 2009 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 28%-ով (5647-ով), իսկ ծավալը՝ 25%-ով (236 մլն դրամով):

ՀՀ տարածքում մեկ վճարային քարտով իրականացված ամսական կանխիկացման գործառնությունների ծավալը կազմել է մոտ 50 հազ. դրամ, իսկ անկանխիկը՝ 4 հազ. դրամ, (քանակը համապատասխանաբար կազմել է 1.1 և 0.1), որը 2009 թ. առաջին եռամսյակի համեմատ պահպանվել է նույն մակարդակի վրա:

ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2006 - 2009 թթ., ինչպես նաև 2009 - 2010 թթ. եռամսյակների ընթացքում



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, իրականացվում են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված՝ դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը անդամակցում են 17 միջազգային դրամական փոխանցումների համակարգերի:

Դրամական փոխանցումների իրականացման համակարգերը

Համակարգեր	Մասնակից բանկերի քանակը	Մասնակից կազմակերպությունների քանակը	Մասնաբաժինը ստացումների ծավալում, %
UNISTREAM	1		44.08
ANELIK	9	1	9.12
CONTACT	8	2	8.97
MIGOM	12	2	8.45
BISTRAYA POCHTA	12	1	4.24
MONEY GRAM	16	1	6.32
LIDER	8	1	2.32
INTEREXPRESS	3	1	2.19
ZOLOTAYA CORONA	4	1	8.24
BLIZKO	4	2	1.86
BTF-Sauz	1		0.74
FASTER	1	1	0.48
ALLUR	4		0.40
AVERS	2		0.09
XPRESS MONEY	1		0.04
INTEL EXPRESS	1		0.67
RIA MONEY TRANSFER	2	1	0.80
MONEY TUN	-	1	0.13
COINSTAR MONEY TRANSFER	1	1	0.34
STEFI	-	1	0.50

2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում այս համակարգերին մասնակից առևտրային բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 69 մլրդ դրամ (քանակը՝ 319336), որը 6.1 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Նշված համակարգերով ստացված միջոցների ծավալը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 17 մլրդ դրամով: Միջազգային դրամական փոխանցումների համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 216 հազ. դրամ. նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 28 հազ. դրամով:

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են 4.7%-ով (1.5 մլրդ դրամով) և կազմել մոտ 32 մլրդ դրամ, իսկ մեկ վճարման ծավալը կազմել է 1.8 մլն դրամ, որը գրեթե պահպանվել է նույն մակարդակում: Միաժամանակ, բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումները արտասահման կազմել են 42 մլրդ դրամ. նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 17%-ով (6 մլրդ դրամով):

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով (SWIFT-ի, տելեքսի, ֆաքսի միջոցով) Հայաստանի Հանրապետություն կատարված համախառն փոխանցումների ծավալը 2010 թ. առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 693 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 35629 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 19 մլն դրամ (նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելացել է 27%-ով):

ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 10 վճարահաշվարկային կազմակերպություններ, որոնցից 3-ը իրավունք ունեն իրականացնելու միայն դրամական միջոցների փոխանցում, 6-ը՝ վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և, միաժամանակ, դրամական (փողային) փոխանցումներ:

Դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով ապահովում են արտասահմանից ՀՀ ուղղված վճարումների իրականացումը: Այդ կազմակերպությունները հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 1 մլրդ դրամի վճարում, այդ թվում՝ 0.9 մլրդ դրամի վճարումը կատարվել է միջազգային դրամական փոխանցումների իրականացման համակարգերին անդամակցելու միջոցով, իսկ արտասահման կատարվել է 0.1 մլրդ դրամի փոխանցում: Հաշվետու ժամանակահատվածում դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմել է՝ արտասահման փոխանցումները՝ 0.2%, իսկ արտասահմանից ստա-

ցումները՝ 1%: Այս կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը կազմել է 93 հազ. դրամ: Ընդ որում՝ դրամական փոխանցումների իրականացման համակարգերով մեկ վճարման միջին ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 2 հազ. դրամով:

Վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և, միաժամանակ, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող 6 կազմակերպություններ ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների միջոցով մատուցում են հանրային նշանակություն ունեցող ծառայությունների դիմաց կանխիկ միջոցներով վճարումների ընդունման ծառայություններ: Նշված վճարահաշվարկային կազմակերպությունները ինքնասպասարկման տերմինալներով հավաքագրում են բնակչությանը մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարները մոտ 33 կազմակերպությունների համար: 2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ տեղադրված են 690 ինքնասպասարկման տերմինալներ, որոնց միջոցով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 4.8 մլրդ դրամի (1459797 գործառնություն) միջոցների հավաքագրում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նշված ծավալը ավելացել է 58%-ով:

Բացի այդ, որոշ վճարահաշվարկային կազմակերպություններ պրոցեսինգային, քլիրինգային ծառայություններ են մատուցում 9 առևտրային բանկերի: Այդ առևտրային բանկերը, համագործակցելով վճարահաշվարկային կազմակերպությունների հետ, իրականացրել են կոմունալ ծառայությունների դիմաց միջոցների հավաքագրում՝ գրանցված 109 դրամարկղային կետերի միջոցով: Վերջիններիս կողմից հավաքագրված միջոցների ծավալը կազմել է 0.3 մլրդ դրամ (49394 գործառնություն): 2010 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից բացվել է 22 մասնաճյուղ, որտեղ միջոցների հավաքագրումը նույնպես կատարվում է դրամարկղային կետերի միջոցով: Վճարահաշվարկային կազմակերպությունների դրամարկղային կետերի միջոցով կատարվել է 313602 գործառնություն՝ 1.6 մլրդ դրամ ծավալով:

«ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը քարտերի սպասարկման սարքավորումների միջոցով ապահովել է 89 մլրդ դրամ ծավալով քարտային գործառնությունների պրոցեսինգ (2009 թ. առաջին եռամսյակի համեմատ՝ 30%-ով ավելի), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացվել է 3.7 մլրդ դրամի գործառնություն, իսկ ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով՝ ՀՀ այլ բանկերի պրոցեսինգային կենտրոնների միջոցով (այդ թվում՝ նաև արտասահմանում) իրականացվել է 9 մլրդ դրամի գործառնություն:

Մակրոտնտեսական ցուցանիշները 2010 թ. հունվար – մարտին

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

Իրական հատված

Անվանում	*Հունվար*	*Հունվար - փետրվար*	*Հունվար - մարտ*	*2010 թ.հունվար-մարտի իրական աճի հնդեքսը՝2009 թ. հունվար-մարտի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	167861.3[1]	345483.2[1]	568142.8	105.5
ՀՆԱ դեֆլյատոր *(%)*	-	-	-	110.2
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ, ամսական)* [2]	156.4[1]	321.9[1]	529.3	105.4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	53657.8	111612.4	177490.3	110.4
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	542.2	1024.5	1584.5	109.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	14753.7	27794.4	42543.6	103.2
Մանրածախ առևտրի ծավալը *(մլն դրամ)*	61556.6	136212.9	210927.7	101
Շինարարության ծավալը *(մլն դրամ)*	9838.0	21591.4	46718.1	99.4
Ծառայությունների ծավալը *(մլն դրամ)*	47830.0	99332.7	171833.5	106.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ, *(դրամ)*	99560[1]	100965[1]	102712[1]	98.8[2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1158.1	1157.9	1157.7	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	84.7	84.5	84.3	-
Գործազրկության մակարդակը *(%)*	7.3	7.3	7.3	-

Արտաքին հատված

Անվանում	*Հունվար (մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար – փետրվար (մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար – մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2010 թ. հունվար - մարտը 2009 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*
Արտահանում *(FOB)*	53.9	121.4	198.5	160.2
Ներմուծում *(CIF)*	242.5	503.8	814.2	122.4
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	188.6	382.4	615.7	113.7

Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	101.7	103.8	99.2	103.1
Այժմ փորձենք այն մեթոդաբանությունը, որի օգնությամբ կարելի է ՀՀ DSGE մոդելը, որը ապագային միտված տարբերակային հավասարումների երկրորդ կարգի համակարգ է, ներկայացնել SVAR մոդելի տեսքով, որը, ըստ էության, տարբերակային հավասարումների առաջին կարգի համակարգ է: ՀՀ-ում կիրառվող DSGE մոդելի հավասարումները ներկայացված են հավելված 1-ում: Այդ մոդելը կարելի է ներկայացնել հետևյալ մատրիցային հավասարման օգնությամբ.

$$B_{11}X_t = \alpha + A_{11}E_t(X_{t+1}) + B_{12}X_{t-1} + \varepsilon_t,\ \varepsilon_t \approx (0, D) \quad (9)$$

որտեղ՝

X_t *- ն նախնական փոփոխականների վեկտորն է ժամանակի t պահին,*

B_{11}, A_{11}, B_{12} *-ն կառուցվածքային հավասարումների գործակիցների մատրիցներն են,*

ε_t *- ն սխալների վեկտորն է,*

E_t *- ն ներկայացնում է փոփոխականների վերաբերյալ սպասումները հաջորդ ժամանակահատվածի համար:*

Մոդելի այս հատկության առկայության պատճառով է, որ այն անվանում են նաև ապագային միտված փոփոխականներով մոդել:

Ենթադրելով, որ տնտեսավարող սուբյեկտները ռացիոնալ են գործում, կարող ենք սպասումները ներկայացնել հետևյալ կերպ. $X_{t+1} = E_t(X_{t+1}) + v_{t+1}$: Համաձայն բարձրագույն մաթեմատիկայում հայտնի անորոշ գործակիցների եղանակի սկզբունքների (method of undetermined coefficients)՝ հավասարում (9) - ի լուծումը ունի հետևյալ ընդհանուր տեսքը.

$$X_{t+1} = c + \Omega X_t + \Gamma \varepsilon_{t+1}$$

Վերջինս տեղադրելով (9) հավասարման մեջ և կատարելով որոշակի մաթեմատիկական ձևափոխություններ՝ ստանում ենք հետևյալ հավասարումը.

$$B_{11}X_t = \alpha + A_{11}(c + \Omega X_t) + B_{12}X_{t-1} + \varepsilon_t$$
$$(B_{11} - A_{11}\Omega)X_t = \alpha + A_{11}c + B_{12}X_{t-1} + \varepsilon_t$$
$$X_t = (B_{11} - A_{11}\Omega)^{-1}\alpha + (B_{11} - A_{11}\Omega)^{-1}B_{12}X_{t-1} + (B_{11} - A_{11}\Omega)^{-1}\varepsilon_t$$

Վերջին հավասարումը, ըստ էության, ավանդական SVAR մոդել է, որտեղ՝

$$\Omega = (B_{11} - A_{11}\Omega)^{-1}B_{12}$$
$$\Gamma = (B_{11} - A_{11}\Omega)^{-1}$$
$$c = (B_{11} - A_{11}\Omega - A_{11})^{-1}\alpha$$

Վերջին հավասարումից երևում է, որ VAR մոդելի և կառուցվածքային մոդելի մնացորդները գտնվում են գծային կախվածության մեջ, մասնավորապես՝ $v_t = \Gamma\varepsilon_t$:

Այսպիսով, խնդիրն այն է, որ գնահատենք ավանդական SVAR մոդելի գործակիցների Ω մատրիցը: Ունենալով Ω մատրիցը՝ հեշտությամբ կարելի է գնահատել c և Γ մատրիցները: Ω մատրիցի անդամները կարելի է գնահատել առնվազն երկու եղանակով: Առաջին եղանակը կիրառելու համար անհրաժեշտ է $\Omega = (B_{11} - A_{11}\Omega)^{-1}B_{12}$ հավասարումը ներկայացնել հետևյալ համարժեք հավասարման տեսքով՝ $A_{11}\Omega^2 - B_{11}\Omega + B_{12} = 0$, որը քառակուսային մատրիցային հավասարում է, և դրա լուծման համար բարձրագույն հանրահաշվում մշակված են բազմաթիվ հաշվողական ալգորիթմներ: Այսպիսով՝ կիրառելով այդ եղանակները, կարելի է լուծել քառակուսային մատրիցային հավասարումը, և արդյունքում կստանանք բազմաթիվ լուծումներ: Մյուս կողմից, մեզ հետաքրքրում է այդ բազմաթիվ լուծումներից միայն մեկը: Դրա համար այդ եղանակի հետ միաժամանակ պետք է կիրառել նաև ռեկուրսիվ ալգորիթմը, որը ենթադրում է անվերջ զուգամիտող (C_k, Ω_k, Γ_k k = 1,2,3…) մատրիցների հաշվարկը այնպես, որ տեղի ունենա հետևյալ հավասարումը.

$$\bar{X}_t = C_k E_t \bar{X}_{t+k+1} + \Omega_k \bar{X}_{t-1} + \Gamma_k \varepsilon_t$$

Ռեկուրսիվ եղանակի միջոցով կարելի է գնահատել միայն մեկ Ω մատրից: Ռեկուրսիվ եղանակի, ինչպես նաև C_k, Ω_k, Γ_k մատրիցների դուրսբերման մաթեմատիկական ալգորիթմները բավականին մանրամասն ներկայացված են S. Cho, A. Moreno (2002) աշխատության հավելվածում: Այստեղ կանգ չառնելով ապացույցների վրա, նշենք, որ այդ մատրիցների հաշվարկները իրականացվում են հետևյալ բանաձևերով:

$$\Omega_k = (B_{11} - A_{11}S_k)^{-1}B_{12}$$
$$\Gamma_k = (B_{11} - A_{11}S_k)^{-1}(I + A_{11}G_k)$$
$$S_k = \sum_{i=1}^{k}\prod_{j=1}^{i}\Phi_{j-1}\psi_i, G_k = \sum\prod\Phi_{j-1}\Xi_i$$
$$\Phi_0 = I, \Phi_1 = B_{11}^{-1}A_{11}, \Phi_{k+1} = (I - \psi_1\Phi_k)^{-1}\Phi_1$$
$$\psi_{k+1} = (I - \psi_1\Phi_k)^{-1}\psi_1\psi_k$$
$$\Xi_{k+1} = (I - \psi_1\Phi_k)^{-1}(\psi_1\Xi_k + \Xi_1 F^k)$$

Այսպիսով՝ կիրառելով ռեկուրսիվ ալգորիթմի հավասարումները, հնարավոր է ապագային միտված տարբերակային հավասարումների երկրորդ կարգի համակարգը ներկայացնել տարբերակային հավասարումների առաջին կարգի համակարգի տեսքով, այն է՝ SVAR մոդելով: Այժմ ավելի մանրամասն ներկա-

յացնենք, թե կիրառելով վերոնշյալ մեթոդաբանությունը, ինչպես կարելի է ՀՀ DSGE մոդելը ներկայացնել SVAR տեսքով:

3. ՀՀ DSGE ՄՈԴԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ SVAR ՄՈԴԵԼԻ ՏԵՍՔՈՎ

Հավելված 1-ում ներկայացված ՀՀ DSGE մոդելը (9) մատրիցային հավասարման տեսքով տրված է աղյուսակ 1-ում: Այլ կերպ ասած, եթե աղյուսակ 1-ում ներկայացված մատրիցները և նախնական փոփոխականները բազմապատկենք միմյանցով և կատարենք անհրաժեշտ մաթեմատիկական գործողությունները, ապա արդյունքում կստանանք հավելված 1-ում ներկայացված հավասարումների համակարգը: Այսպիսով՝ ունենալով ՀՀ DSGE մոդելի (9) մատրիցային տեսքը և կիրառելով դրա նկատմամբ նախորդ բաժնում ներկայացված մեթոդաբանությունը, կարելի է ՀՀ DSGE մոդելը ներկայացնել SVAR տեսքով: Բայց մինչ SVAR մոդելի արդյունքները ներկայացնելը նպատակահարմար է մեկ անգամ ևս անդրադառնալ ՀՀ DSGE մոդելի պարամետրերի գնահատման խնդրին: Նշենք, որ Ա. Մկրտչյանի աշխատանքում գործակիցների գնահատումը իրականացվել է ներկայումս լայն տարածում ստացած՝ չափաբերման (calibration) եղանակի օգնությամբ: Միաժամանակ, սույն հետազոտությունում գործակիցների գնահատումը առաջարկվում է իրականացնել, այսպես կոչված՝ ցանցային որոնումների (grid search) եղանակի օգնությամբ: Այսպիսով՝ նախ ներկայացնենք այդ մեթոդաբանությունը և դրա միջոցով ստացված գնահատականները, այնուհետև վերադառնանք մեր հիմնական խնդրին, այն է՝ ՀՀ DSGE մոդելի՝ SVAR տեսքով ներկայացման արդյունքներին:

Աղյուսակ 1

ՀՀ DSGE մոդելի ներկայացումը մատրիցի տեսքով

$$
\begin{bmatrix}
1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & h & 0 & 0 & 0 & \frac{(1-h)}{\sigma} & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
-(k_1+k_2) & 1 & 0 & 0 & -d_1 & 0 & -(1-k_1-k_2-k_3) & d_2 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & -k_3 & 0 \\
-\frac{(1-b_m)k_f\gamma_\psi\sigma}{(1-h)} & -(1-b_m)k_f\gamma_\psi\eta & 1 & 0 & (1-b_m)k_f & 0 & 0 & -(1-b_m)k_f & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & (1-b_m)(1+\eta)k_f\gamma_1 \\
-\frac{(1-b_h)k_h\sigma}{(1-h)} & -(1-b_h)k_h\eta & 0 & 1 & -\frac{(1-b_h)k_h\gamma}{(1-\gamma)} & 0 & 0 & \frac{(1-b_h)k_h\gamma}{(1-\gamma)} & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & (1-b_h)(1+\eta)k_h \\
0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & -1 & 0 & 0 & 1 & 0 & 0 \\
0 & 0 & -(1-b_i)0.7 & -(1-b_i)0.7 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 1 & -1 & 0 & 0 & 0 & 0 & -1 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & -1 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & -\gamma & -(1-\gamma) & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & -1 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & -1 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1
\end{bmatrix}
\times
\begin{bmatrix}
c_t \\ y_t \\ \pi_t^m \\ \pi_t^h \\ q_t \\ i_t \\ y_t^* \\ \varphi_t \\ \Delta s_t \\ \pi_t \\ rr_t \\ rr_t^* \\ i_t^* \\ \pi_t^* \\ tr_t \\ g_t \\ pr_t
\end{bmatrix}
$$

$$
d_1 = k_1 a \frac{\gamma}{1-\gamma} - k_2 a + (1-k_1-k_2-k_3)\frac{a^*}{(1-\gamma)} \qquad k_f = \frac{(1-\omega_f)(1-\omega_f\beta)}{\omega_f}
$$

$$
d_2 = k_1 a \frac{\gamma}{1-\gamma} - k_2 a + (1-k_1-k_2-k_3)\frac{a^*\gamma}{(1-\gamma)} \qquad k_h = \frac{(1-\omega_h)(1-\omega_h\beta)}{\omega_h}
$$

ՀՀ DSGE մոդելի ներկայացումը մատրիցի տեսքով *(շարունակություն)*

$$
\begin{bmatrix}
0 & 0 & 0 & 0 & \frac{(1-h)(1-b_s)}{\sigma} & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \frac{(1-h)}{\sigma} & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & (1-b_m)\beta & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & (1-b_h)\beta & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & (1-b_s) & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & -1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & -1 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0
\end{bmatrix}
\times
\begin{bmatrix}
E_t c_{t+1} \\ E_t y_{t+1} \\ E_t \pi^m_{t+1} \\ E_t \pi^h_{t+1} \\ E_t q_{t+1} \\ E_t i_{t+1} \\ E_t y^*_{t+1} \\ E_t \varphi_{t+1} \\ E_t \Delta s_{t+1} \\ E_t \pi_{t+1} \\ E_t rr_{t+1} \\ E_t rr^*_{t+1} \\ E_t i^*_{t+1} \\ E_t \pi^*_{t+1} \\ E_t tr_{t+1} \\ E_t g_{t+1} \\ E_t pr_{t+1}
\end{bmatrix}
$$

ՀՀ DSGE մոդելի ներկայացումը մատրիցի տեսքով *(շարունակություն)*

$$
\begin{bmatrix}
h & 0 & 0 & 0 & \frac{(1-h)b_s}{\sigma} & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
-\frac{(1-b_m)k_f\gamma_\psi\sigma h}{(1-h)} & 0 & b_m & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
-\frac{(1-b_h)k_h\sigma h}{(1-h)} & 0 & 0 & b_h & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
 & & & & b_s & & & & & & & & & & & & \\
0 & 0 & 0 & 0 & 0 & b_i & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho^*_{gdp} & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & -1 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho^*_i & 0 & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho^*_\pi & 0 & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho_{tr} & 0 & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho_g & 0 \\
0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & 0 & \rho_{pr}
\end{bmatrix}
\times
\begin{bmatrix}
c_{t-1} \\ y_{t-1} \\ \pi^m_{t-1} \\ \pi^h_{t-1} \\ q_{t-1} \\ i_{t-1} \\ y^*_{t-1} \\ \varphi_{t-1} \\ \Delta s_{t-1} \\ \pi_{t-1} \\ rr_{t-1} \\ rr^*_{t-1} \\ i^*_{t-1} \\ \pi^*_{t-1} \\ tr_{t-1} \\ g_{t-1} \\ pr_{t-1}
\end{bmatrix}
+
\begin{bmatrix}
\varepsilon^c_t \\ \varepsilon^y_t \\ \varepsilon^{\pi_m}_t \\ \varepsilon^{\pi_h}_t \\ \varepsilon^q_t \\ \varepsilon^i_t \\ \varepsilon^{y^*}_t \\ 0 \\ 0 \\ 0 \\ 0 \\ 0 \\ 0 \\ \varepsilon^{\pi^*}_t \\ \varepsilon^{tr}_t \\ \varepsilon^g_t \\ \varepsilon^{pr}_t
\end{bmatrix}
$$

3.1. ՀՀ DSGE ՄՈԴԵԼԻ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑԱՆՑԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԸ

ՀՀ DSGE մոդելի պարամետրերի գնահատման առնչությամբ նախ նշենք, որ DSGE մոդելների տեսական դրույթներից արդեն իսկ մեզ հայտնի են այն միջակայքերը, որի շրջանակներում, որպես կանոն, կարող են տատանվել մոդելի պարամետրերը: Նշենք, որ DSGE մոդելների պարամետրերը, ըստ իրենց բնույթի, լինում են մի քանի տեսակի, մասնավորապես՝ կարող են լինել հաշվարկային, այսինքն՝ դրանք տնտեսությունում ձևավորված համամասնություններ են կամ տեսակարար կշիռներ, երկրորդ

խումբը արտածին փոփոխականների ավտոռեգրեսիվ վարքագիծը նկարագրող մեծություններ են, որոնք գնահատվում են պարզ OLS-ի միջոցով: Գործակիցների երրորդ խումբը նկարագրում է մոդելում ներառված տնտեսավարող սուբյեկտների վարքագծերը և հանդիսանում գնահատման հիմնական առարկան: Ըստ էության, ՀՀ DSGE մոդելում ներկայացված երրորդ խմբի գործակիցների գնահատականները իրականացվել են չափաբերման եղանակով: Ընդունելով գնահատման այդ մոտեցումը՝ որպես գնահատման այլընտրանքային տարբերակ, կիրառել ենք ցանցային որոնումների (grid search) եղանակը:

ՀՀ DSGE մոդելում երրորդ խմբի գործակիցներն են՝ ներքին արտադրության և ներմուծված ապրանքների գնագոյացման գործընթացը նկարագրող կոշտությունների և հետժամանակային (լագային) ազդեցության գործակիցները, սպառման միջժամանակային փոխարինման առաձգականությունը և սպառման իներցիան ու սովորույթները բնութագրող գործակիցը, աշխատուժի առաջարկի առաձգականությունը իրական աշխատավարձերից, ներքին ապրանքների և ներմուծման ներքին սպառման փոխարինման առաձգականությունը և նույն առաձգականության գործակիցը արտերկրի համար, ինչպես նաև դրամավարկային կանոնում առկա տոկոսադրույքի հետժամանակային (լագային) ազդեցության և գնաճին արձագանքող գործակիցները: Հենց այս գործակիցներն էլ գնահատվել են ցանցային որոնումների (grid search) եղանակի օգնությամբ:

Ցանցային որոնումների եղանակի էությունը, ընդհանուր առմամբ, հետևյալն է: Հայտնի է, որ վերոնշյալ գործակիցների մի մասը, օրինակ, կարող է փոփոխվել 0-1 միջակայքում: Նրանցից յուրաքանչյուրի համար նախ կառուցվում է միջակայք, որտեղ նվազագույն արժեքը հավասար է 0.1, իսկ առավելագույն արժեքը՝ 0.9, այնուհետև ընտրվում է փոփոխման քայլը, օրինակ՝ h = 0.2: Կիրառելով նշվածը յուրաքանչյուր գործակցի համար՝ ընտրելով միջակայք և փոփոխման քայլ, ստացվում է, որ կարելի է գործակիցների տարբեր արժեքների համադրման միջոցով ստանալ մոդելի բազմաթիվ սցենարներ: Օրինակ, եթե գնահատման ենթակա գործակիցների ընդհանուր քանակը հավասար է հինգի, տատանումների, համապատասխանաբար՝ 0.1-0.9 միջակայքով և 0.2 քայլով (հինգ տարբեր արժեքներ), ապա ստացվում է, որ պետք է դիտարկվեն DSGE մոդելի 3125 (5^5) հնարավոր տարբերակներ:

Գործակիցների համադրումների բոլոր հնարավոր տարբերակների համար DSGE մոդելով իրականացվում են փոփոխականների կանխատեսումներ փաստացի ժամանակահատվածի համար, որոնք հետագայում համեմատվում են այդ փոփոխականների փաստացի տվյալների հետ: Գործակիցների այն համակցումը, որի դեպքում փոփոխականների մոդելով կանխատեսված և փաստացի տվյալների շեղումների քառակուսիների գումարը (RMSE) նվազագույնն է, ընդունում ենք որպես DSGE մոդելի գործակիցների լավագույն սցենար: Այսպիսով՝ ՀՀ DSGE մոդելի չափանիշների գնահատումը իրականացվել է ցանցային որոնումների եղանակով և գնահատվել են մոդելի՝ տնտեսավարող սուբյեկտների վարքագծերը նկարագրող գործակիցները: Հաշվարկների իրականացման համար MATLAB փաթեթում ստեղծվել է համապատասխան ծրագրային ապահովում: Ցանցային որոնումների (grid search) և չափաբերման (calibration) եղանակներով գնահատված DSGE մոդելի չափանիշների արժեքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

DSGE մոդելի ցանցային որոնումների և չափաբերման եղանակներով գնահատված գործակիցները

	DSGE parameters	*Calibration*	*Grid search*
1	h	*0.65*	***0.60***
2	σ	*1.86*	***2.30***
3	η	*1.30*	***1.40***
4	β_m	*0.45*	***0.40***
5	β_h	*0.65*	***0.60***
6	β_q	*0.25*	***0.20***
7	β_i	*0.45*	***0.40***
8	ω_f	*0.80*	***0.85***
9	ω_h	*0.65*	***0.70***
10	a	*0.73*	***0.65***
11	a^*	*0.73*	***0.65***

3.2. ՀՀ DSGE ՄՈԴԵԼԻ SVAR ՏԵՍՔՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այժմ կիրառելով ինչպես ՀՀ DSGE մոդելի առաջին կարգի SVAR մոդելի տեսքով ներկայացման մեթոդաբանությունը, այնպես էլ ցանցային որոնումների եղանակով գնահատված գործակիցների արժեքները՝ ՀՀ DSGE մոդելը ներկայացնենք կառուցվածքային VAR մոդելի տեսքով: Արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

ՀՀ DSGE մոդելը՝ SVAR մոդելի տեսքով

$$\begin{bmatrix} c_t \\ y_t \\ \pi_t^m \\ \pi_t^h \\ q_t \\ i_t \\ y_t^* \\ \varphi_t \\ \Delta s_t \\ \pi_t \\ rr_t \\ rr_t^* \\ i_t^* \\ \pi_t^* \\ tr_t \\ g_t \\ pr_t \end{bmatrix} = \begin{bmatrix} 0.55 & 0.00 & -0.11 & -0.15 & 0.10 & -0.15 & 0.00 & -0.04 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.12 & -0.06 & 0.01 & 0.00 & 0.13 \\ 0.35 & 0.00 & -0.07 & -0.20 & 0.19 & -0.16 & 0.10 & -0.12 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.17 & -0.09 & -0.07 & 0.08 & 0.16 \\ 0.01 & 0.00 & 0.53 & 0.00 & -0.04 & -0.04 & 0.01 & 0.06 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.06 & -0.03 & -0.05 & 0.00 & -0.02 \\ 0.13 & 0.00 & -0.08 & 0.50 & 0.24 & -0.18 & 0.05 & -0.18 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.19 & -0.09 & -0.05 & 0.03 & -0.32 \\ -0.18 & 0.00 & -0.40 & -0.55 & 0.38 & -0.57 & -0.07 & -0.14 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.93 & -0.47 & -0.69 & -0.04 & 0.49 \\ 0.06 & 0.00 & 0.19 & 0.21 & 0.08 & 0.31 & 0.02 & -0.05 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.10 & -0.05 & -0.04 & 0.01 & -0.14 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.63 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 \\ -0.09 & 0.00 & -0.85 & -0.17 & -0.41 & -0.67 & -0.03 & 0.69 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 1.03 & -0.51 & -0.69 & -0.02 & 0.27 \\ -0.08 & 0.00 & -0.33 & -0.18 & -0.45 & -0.71 & -0.03 & -0.26 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 1.09 & -1.04 & -0.75 & -0.02 & 0.25 \\ 0.10 & 0.00 & 0.07 & 0.37 & 0.17 & -0.14 & 0.04 & -0.12 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.15 & -0.08 & -0.05 & 0.02 & -0.14 \\ -0.02 & 0.00 & 0.18 & 0.14 & -0.12 & 0.45 & -0.01 & 0.11 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & -0.08 & 0.04 & 0.05 & 0.00 & 0.07 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.50 & -0.25 & 0.00 & 0.00 & 0.00 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.50 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.50 & 0.00 & 0.00 & 0.00 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.75 & 0.00 & 0.00 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.63 & 0.00 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.74 \end{bmatrix} \times \begin{bmatrix} c_{t-1} \\ y_{t-1} \\ \pi_{t-1}^m \\ \pi_{t-1}^h \\ q_{t-1} \\ i_{t-1} \\ y_{t-1}^* \\ \varphi_{t-1} \\ \Delta s_{t-1} \\ \pi_{t-1} \\ rr_{t-1} \\ rr_{t-1}^* \\ i_{t-1}^* \\ \pi_{t-1}^* \\ tr_{t-1} \\ g_{t-1} \\ pr_{t-1} \end{bmatrix} +$$

ՀՀ DSGE մոդելը՝ SVAR մոդելի տեսքով *(շարունակություն)*

$$\begin{bmatrix} 0.82 & -0.08 & -0.27 & -0.24 & 0.04 & -0.38 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.23 & -0.12 & 0.02 & 0.02 & 0.18 \\ 0.44 & 0.89 & -0.18 & -0.33 & 0.15 & -0.39 & 0.15 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.3 & -0.17 & -0.09 & 0.13 & 0.22 \\ 0.04 & 0.01 & 1.32 & -0.01 & 0.04 & -0.10 & 0.01 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.12 & -0.06 & -0.07 & 0.00 & -0.02 \\ 0.55 & 0.27 & -0.19 & 0.83 & 0.10 & -0.45 & 0.07 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.37 & -0.19 & -0.07 & 0.05 & -0.43 \\ -0.68 & -0.31 & -1.00 & -0.92 & 1.15 & -1.42 & -0.11 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 1.86 & -0.93 & -0.93 & -0.07 & 0.66 \\ 0.24 & 0.12 & 0.47 & 0.34 & 0.06 & 0.77 & 0.03 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.21 & -0.10 & -0.06 & 0.02 & -0.19 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 1.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 \\ -0.30 & -0.12 & -2.13 & -0.29 & 1.20 & -1.68 & -0.05 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 2.05 & -1.03 & -0.93 & -0.03 & 0.36 \\ -0.27 & -0.11 & -0.81 & -0.54 & 1.25 & -1.88 & -0.15 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 2.25 & -2.13 & -1.02 & -0.02 & 0.25 \\ 0.31 & 0.06 & 0.27 & 0.82 & 0.04 & -0.19 & 0.08 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.17 & -0.08 & -0.05 & 0.01 & -0.14 \\ 0.00 & 0.01 & 0.43 & 0.04 & -0.02 & 1.10 & -0.05 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & -0.11 & 0.05 & 0.04 & -0.01 & 0.09 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 1.00 & 1.00 & -0.50 & 0.00 & 0.00 & 0.00 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 1.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 1.00 & 0.00 & 0.00 & 0.00 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 1.00 & 0.00 & 0.00 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 1.00 & 0.00 \\ 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 0.00 & 1.00 \end{bmatrix} \times \begin{bmatrix} res_c_t \\ res_y_t \\ res_\pi_t^m \\ res_\pi_t^h \\ res_q_t \\ res_i_t \\ res_y_t^* \\ res_\varphi_t \\ res_\Delta s_t \\ res_\pi_t \\ res_rr_t \\ res_rr_t^* \\ res_i_t^* \\ res_\pi_t^* \\ res_tr_t \\ res_g_t \\ res_pr_t \end{bmatrix}$$

Այսպիսով՝ առաջին կարգի SVAR մոդելի տեսքով ներկայացված ՀՀ DSGE մոդելը թույլ է տալիս մոդելի արդյունքները մեկնաբանել փոփոխականների միայն նախորդ ժամանակահատվածի լագի և փոփոխականների սեփական ստոխաստիկ տատանումների միջոցով: Փոփոխականների նախորդ ժամանակահատվածի լագային և սեփական տատանումների ազդեցությունների կուտակային մակարդակները ներկայացված են աղյուսակներ 4-ում և 5-ում:

Աղյուսակ 4

VAR մոդելի փոփոխականների արձագանքը տարբեր բնույթի տատանումներին
(տոկոսով, կուտակային)

	gdp	*dot_s*	*c*	*i*	*ψ*	*pie_m*	*pie_h*	*q*
Res_pie_h	-1.22	0.17	-1.17	0.24	0.61	0.17	0.17	-1.75
Res_pie_m	-0.46	1.41	-1.64	1.98	-12.00	1.41	1.41	-2.46
Res_pr	2.77	-0.42	2.86	-0.59	0.70	-0.42	-0.42	4.30
Res_tr	-0.22	-0.59	0.27	-0.82	-3.52	-0.59	-0.59	-3.60
Res_gdp_star	0.23	0.06	-0.17	0.08	-0.07	0.06	0.06	-0.56
Res_i	-0.43	-0.59	-0.77	0.84	-3.50	-0.59	-0.59	-1.16
Res_c	0.34	0.24	1.12	0.33	-0.05	0.24	0.24	-2.07
Res_gdp	0.60	0.07	-0.40	0.10	0.05	0.07	0.07	-0.60
Res_q	0.13	0.13	0.07	0.19	1.51	0.13	0.13	1.11
Res_gov	0.20	0.03	-0.21	0.05	-0.03	0.03	0.03	-0.32

Աղյուսակ 5

VAR մոդելի փոփոխականների արձագանքը փոփոխականի 1% փոփոխության դեպքում
(տոկոսով, կուտակային)

	gdp	*dot_s*	*c*	*i*	*fi*	*pie_m*	*pie_h*	*q*
pie_h	-0.73	0.10	-0.70	0.14	0.37	0.10	0.10	-1.05
pie_m	-0.18	0.56	-0.66	0.79	-4.80	0.56	0.56	-0.99
pr	2.05	-0.31	2.12	-0.44	0.52	-0.31	-0.31	3.18
tr	-0.17	-0.44	0.20	-0.62	-2.64	-0.44	-0.44	-2.70
gdp_star	0.15	0.04	-0.11	0.05	-0.04	0.04	0.04	-0.36
i	-0.17	-0.24	-0.31	0.33	-1.40	-0.24	-0.24	-0.46
c	0.50	0.09	0.97	0.12	-0.07	0.09	0.09	-0.79
gov	0.12	0.02	-0.13	0.03	-0.02	0.02	0.02	-0.20

Հիմք ընդունելով աղյուսակ 3-ում ներկայացված գործակիցները՝ բացատրենք իրական ՀՆԱ-ի փոփոխման վարքագիծը: Իրական ՀՆԱ-ի վրա դրական ազդեցություն ունի սպառման նախորդ լագը, որը պայմանավորված է մոդելում սպառման սովորույթների, իներցիայի, ճշգրտման ծախսերի և այլ պատճառներով սպառման նախորդ լագի առկայությամբ: Վերջինս սպառման վրա ազդում է 0.55 գործակցով, իսկ ՀՆԱ-ի վրա ազդեցությունը նվազում է մինչև 0.35-ի՝ հիմնականում ի հաշիվ ՀՆԱ-ում սպառման 0.575 տեսակարար կշռի: Տոկոսադրույքի ազդեցությունը իրական ՀՆԱ-ի վրա նույնպես սկսվում է սպառման վրա ունեցած ազդեցությունից, որը կազմում է -0.15: Չնայած այս գործակիցը ՀՆԱ-ի համար պետք է նվազեր, կրկին ի հաշիվ ՀՆԱ-ում սպառման 0.575 տեսակարար կշռի առկայության, սակայն, որպես փոքր բաց տնտեսություն, առկա է նաև փոխարժեքի փոխանցումային ուղի: Տոկոսադրույքի աճը հանգեցնում է իրական փոխարժեքի արժևորման, որը ունենում է զսպողական ազդեցություն իրական ՀՆԱ-ի վրա: Արդյունքում՝ վերջինս գերակայում է առաջինի նկատմամբ և տոկոսադրույքի ազդեցությունը իրական ՀՆԱ-ի վրա աճում է սպառմանը համամասնորեն և կազմում է -0.16: Մեկ գնի օրենքից շեղման և իրական փոխարժեքի գործակիցները պետք է լինեին հակառակ նշանով, ընդ որում՝ վերջինը պետք է գերազանցեր առաջինին: Նախ՝ իրական փոխարժեքը պետք է դրականորեն ազդեր իրական ՀՆԱ-ի վրա, քանի որ իրական փոխարժեքի արժեզրկումը մեծացնում է երկրի արտաքին մրցունակությունը. աճում է արտաքին պահանջարկը և նվազում հարաբերական պահանջարկը ներմուծված ապրանքների նկատմամբ՝ տնտեսության ներսում արտադրված ապրանքների շնորհիվ: Ազդեցության այս գործակիցը ստացվել է՝ 0.10:

Սակայն ինչպես նշված է ՀՀ DSGE մոդելում, ներմուծված ապրանքների գնագոյացման գործընթացում առկա են կոշտություններ և անվանական փոխարժեքի ազդեցությունը միանգամից չի փոխանցվում ներմուծված գներին: Առաջ է գալիս մեկ գնի օրենքից շեղում, որի առկայությունն էլ չեզոքացնում է անվանական փոխարժեքի փոփոխման հետևանքով իրական փոխարժեքի փոփոխման ազդեցությունը ներքին հարաբերական պահանջարկի վրա: Արդյունքում՝ մեկ գնի օրենքի ազդեցությունը իրական ՀՆԱ-ի վրա բացասական է և կազմում է -0.04:

Ներքին արտադրության և ներմուծված ապրանքների գների աճի ազդեցությունը իրական ՀՆԱ-ի վրա բացասական է՝ պայմանավորված հետևյալ երկու հիմնական հանգամանքներով: Նախ՝ դրանք սպառողական զամբյուղի երկու բաղադրատարրեր են, որոնց կշռված միջինով որոշվում է ընդհանուր սպառողական ապրանքների գների աճը: Վերջինիս վերաբերյալ սպասումները հաջորդ ժամանակահատվածի համար իր ազդեցությունն են ունենում իրական տոկոսադրույքների վրա, ինչն էլ որոշում է սպառման վարքագիծը (սպառման էյլերի հավասարում), հետևաբար և ազդում է իրական ՀՆԱ-ի վրա: Միաժամանակ, նշված երկու ապրանքների գների աճի որոշման հավասարումներում ներառվել են նախորդ ժամանակահատվածի լագերը՝ որպես գների ճշգրտման սովորույթներ, ճշգրտման ծախսեր և այլ պատճառներ: Այս հանգամանքը բացասական կապ է ստեղծում գների սպասվող աճի և գների աճի նախորդ ժամանակահատվածի ցուցանիշների միջև: Արդյունքում գների նախորդ լագի աճը նվազեցնում է գների սպասվող աճի ցուցանիշը, աճին նպաստում է իրական տոկոսադրույքը, իսկ վերջինս խթանող ազդեցություն է ունենում իրական ՀՆԱ-ի վրա: Այլ խոսքով, եթե գների նախորդ ժամանակահատվածի աճը որոշ հանգամանքների պատճառով ավելանում է, ապա աճում է նաև գների մակարդակը, որը նվազեցնում է իրական պահանջարկը և առաջ է բերում ինչպես իրական սպառման, այնպես էլ իրական ՀՆԱ-ի նվազում:

Իրական ՀՆԱ-ի վրա փոփոխականների սեփական տատանումների ազդեցությունները ունեն միևնույն բացատրությունները, ինչ նախորդ ժամանակահատվածի ազդեցությունները, միայն մեկ տարբերությամբ, որը առաջինի ազդեցության գործակիցները ավելի մեծ են: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ DSGE մոդելում փոփոխականների նախորդ ժամանակահատվածի ազդեցության գործակիցները փոքր են մեկից:

Փոփոխականների նախորդ ժամանակահատվածի լագային և սեփական տատանումների կուտակային ազդեցությունները (աղյուսակ 4 և 5) նույնպես վկայում են, որ նրանց փոխանցումային ազդեցությունները տեղի են ունենում նույն տրամաբանությամբ, ինչ նախորդ նկարագրված դեպքում է: Հիմնական տարբերությունը առաջ է գալիս գների աճի տատանումների պարագայում, երբ իրական ՀՆԱ-ն կուտակային առումով շատ ավելի է նվազում: Պատճառն այն է, որ այս տատանումները առաջարկի տատանումներ են՝ բարձր գնաճ և ցածր ՀՆԱ, որի պարագայում տոկոսադրույքներով կարգավորման գործընթացում առաջ է գալիս երկընտրանք: Այնուհանդերձ, բարձր գնաճի պարագայում տոկոսադրույքները բարձրացվում են, որը էլ ավելի է խորացնում ՀՆԱ-ի նվազումը: Արդյունքում՝ ՀՆԱ-ի և գնաճի կարգավորման գործընթացը ավելի երկար է տևում՝ ՀՆԱ-ի առավել մեծ կուտակային կորուստներով:

Այսպիսով՝ մենք ներկայացրեցինք ՀՆԱ-ի վրա SVAR մոդելի փոփոխականների ազդեցության բնույթը և չափը: Մյուս փոփոխականների ազդեցությունները բացատրվում են նույն տրամաբանությամբ, ընդ որում՝ դրանց վարքագծերը ճշտությամբ համընկնում են Ա. Մկրտչյանի աշխատանքում ներկայացված վերլուծությանը (Ա. Մկրտչյան, 2009):

Հաճախ գործնական հետազոտությունների ժամանակ գնաճի վարքագիծը քննարկվում է իրական ՀՆԱ-ի ճեղքվածքի վրա ունեցած ազդեցության առումով՝ չանդրադառնալով մոդելի այլ փոփոխականների վարքագծերին: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ներկայացված SVAR մոդելով սիմուլյացիաների միջոցով դիտարկենք իրական ՀՆԱ-ի 1% ճեղքվածքի ձևավորման պարագայում գնաճի փոփոխության վարքագիծը: Իրական ՀՆԱ-ի 1% ճեղքվածքի ձևավորումը քննարկվում է պահանջարկի տատանումների պարագայում: ՀՀ-ն փոքր բաց տնտեսություն է, հետևաբար իրական ՀՆԱ-ի 1% ճեղքվածքը կարող է ձևավորվել ոչ միայն ներքին պահանջարկի գործոնների հաշվին (մասնավոր սպառում և պետական ծախսեր), այլ նաև դրա ձևավորման վրա կարող են ազդել իրական փոխարժեքը, մեկ գնի օրենքից շեղումները, արտաքին առաջարկը: Պետք է նշել, որ իրական ՀՆԱ-ի 1% ճեղքվածքը կարող է տարբեր ազդեցություն ունենալ գնաճի փոփոխության վրա՝ կախված այն հանգամանքից, թե ինչ գործոնով է պայմանավորված այդ ճեղքվածքի ձևավորումը: Այդ պատճառով, վերը նշված փոփոխականներին առանձին-առանձին տրվել են տատանման այնպիսի արժեքներ, որ ապահովվի ՀՆԱ-ի 1% ճեղքվածք: Ընդ որում՝ հաշվարկները կատարվել են ինչպես մոդելի սկզբնական պայմանների շեղումների, այնպես էլ ընթացիկ ժամանակաշրջանի տատանումների պարագաներում: Այնուհետև գնաճի կուտակային փոփոխությունը հարաբերվել է իրական ՀՆԱ-ի կուտակային փոփոխությանը, և ստացված գործակիցը համարվել է իրական ՀՆԱ-ի 1% ճեղքվածքի ազդեցության չափը գնաճի վրա: Արդյունքները ներկայացված են աղյուսակներ 6-ում և 7-ում:

Աղյուսակ 6

Իրական ՀՆԱ-ի նախորդ ժամանակահատվածի 1% ճեղքվածքի պայմաններում իրական ՀՆԱ-ի ճեղքվածքի և գնաճի կուտակային փոփոխությունները (%)

	Իրական ՀՆԱ	Գնաճ	Գնաճի և իրական ՀՆԱ-ի փոփոխությունների հարաբերություն
c	0.773	0.134	0.173
q	0.489	2.335	4.772
y_star	0.728	0.187	0.257
gov	0.827	0.145	0.175

Աղյուսակ 7

Իրական ՀՆԱ-ի ընթացիկ ժամանակահատվածում 1% ճեղքվածքի պայմաններում իրական ՀՆԱ-ի ճեղքվածքի և գնաճի կուտակային փոփոխությունները (%)

	Իրական ՀՆԱ	Գնաճ	Գնաճի և իրական ՀՆԱ-ի փոփոխությունների հարաբերություն
Res_c	0.517	0.363	0.703
Res_q	0.482	0.479	0.994
Res_y_star	1.156	0.297	0.257
Res_gov	1.313	0.230	0.175

Արդյունքները վկայում են, որ գնաճի փոփոխությունը էապես կախված է իրական ՀՆԱ-ի 1% ճեղքվածքի ձևավորման գործոններից: Մասնավորապես՝ նախորդ ժամանակահատվածում ճեղքվածքի ձևավորման պարագայում, երբ այն առաջացել է սպառման պատճառով, ազդեցությունը գնաճի վրա համեմատաբար փոքր է: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ տնային տնտեսությունները նախորդ ժամանակաշրջանի սպառումը h=0.6 գործակցով տեղափոխում են ընթացիկ ժամանակաշրջան և մաքսիմալացնում օգտակարության ֆունկցիան՝ կախված ընթացիկ և նախորդ ժամանակահատվածից տեղափոխված սպառումների տարբերություններից: Արդյունքում՝ սպառման աճից սահմանային օգտակարությունը լինում է համեմատաբար մեծ: Սպառման աճը ընթացիկ ժամանակահատվածում ուղեկցվում է իրական ՀՆԱ աճով, որը տեղի է ունենում ի հաշիվ աշխատուժի առաջարկի աճի: Քանի որ սահմանային օգտակարությունը սպառումից բարձր է, ապա տնային տնտեսությունները պատրաստ են լրացուցիչ աշխատանքի համար պահանջել իրական աշխատավարձերի համեմատաբար փոքր աճ: Այս պարագայում ձեռնարկությունների սահմանային ծախսերի աճը, հետևաբար և՝ իրական ՀՆԱ ճեղքվածքի ազդեցությունը գնաճի վրա լինում է փոքր: Սակայն, երբ սպառման աճը տեղի է ունենում ընթացիկ ժամանակահատվածի տատանումների պատճառով, ապա, քանի որ նախորդ ժամանակահատվածի սպառման աճը հավասար է զրոյի, տնային տնտեսությունները սպառման աճից ստանում են ավելի փոքր օգտակարություն: Նախորդ դեպքի համեմատ, գրեթե նույն աշխատուժի առաջարկի պայմաններում, պահանջվում են ավելի բարձր աշխատավարձեր, ինչը հանգեցնում է ձեռնարկությունների սահմանային ծախսերի և գների աճի ավելի մեծ ցուցանիշների: Նշված հանգամանքների պատճառով իրական ՀՆԱ ճեղքվածքի 1% փոփոխությունը առաջին դեպքում հանգեցնում է 0.173% գնաճի, իսկ երկրորդ դեպքում 0.703%-ով գնաճի:

Հաջորդ կարևոր առանձնահատկությունը իրական փոխարժեքի տատանումների պայմաններում ձևավորված իրական ՀՆԱ ճեղքվածքի և գնաճի համամասնություններն են: Ի տարբերություն նախորդ դեպքի, երբ իրական փոխարժեքի տատանումը ի հայտ է գալիս նախորդ ժամանակահատվածում, իրական ՀՆԱ ճեղքվածքի 1% փոփոխության պայմաններում ձևավորվում է համեմատաբար բարձր գնաճ, քան ընթացիկ ժամանակաշրջանի տատանման դեպքում է: Նախորդ ժամանակաշրջանի տատանման պայմաններում, երբ մեկ գնի օրենքից շեղումը զրո է, ապա իրական փոխարժեքի ազդեցությունը ավելի արագ է փոխանցվում գնաճին, ինչի արդյունքում գնաճի փոփոխությունը լինում է ավելի բարձր, քան ընթացիկ ժամանակաշրջանի տատանման պայմաններում է:

Հաջորդ համեմատությունը, որ արժանի է մեկնաբանման, դա պետական ծախսումների աճով պայմանավորված իրական ՀՆԱ ճեղքվածքի համեմատ գնաճի ցածր մակարդակի ձևավորումն է (համեմատության գործակիցը կազմում է 0.175): Այս գործակիցը մոտ է փակ տնտեսությանը բնորոշ համապատասխան գործակցին, քանի որ պետական ծախսումները ուղղակիորեն ազդեցություն չունեն փոխարժեքի վրա:

Կարևոր է նշել մեկ հանգամանք ևս: Այլ երկրների ՀՆԱ-ի աճը հանգեցնում է համեմատաբար ավելի բարձր գնաճի, քան, օրինակ՝ պետական ծախսումները: Խնդիրն այն է, որ արտասահմանյան երկրների ՀՆԱ-ի աճը հանգեցնում է ոչ կայուն արտահանման, ինչպես նաև սպառման աճի (ռիսկերի վերաբաշխման պայմանը): Վերջինս, ինչպես նշվել է սպառման տատանումների բացատրություններում, իր ազդեցությունն է ունենում իրական աշխատավարձերի, հետևաբար նաև ծեռնարկությունների իրական սահմանային ծախսերի վրա՝ պայմանավորելով լրացուցիչ գնաճ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայացվեց այն մեթոդաբանությունը, որի օգնությամբ կարելի է ՀՀ DSGE մոդելը ներկայացնել SVAR մոդելի տեսքով: Բացի այդ, ներկայացվեցին նաև DSGE մոդելների պարամետրերի գնահատման ցանցային որոնումների (grid search) եղանակի կիրառման առանձնահատկությունները: Առաջարկվում է ՀՀ DSGE մոդելի պարամետրերի գնահատումը իրականացնել ցանցային որոնումների եղանակով, և ապա՝ ՀՀ DSGE մոդելը ներկայացնել ավանդական SVAR մոդելի տեսքով: Նկատենք, որ DSGE մոդելների SVAR տեսքով ներկայացումը ունի այն ակնհայտ առավելությունը, որ այդ դեպքում չեն կիրառվում ապագային միտված փոփոխականները, և մոդելի մեջ ընդգրկված բոլոր փոփոխականների վարքագծերը բացատրվում են միայն իրենց նախորդ լագերի և տվյալ ժամանակաշրջանի տատանումների միջոցով: Մանրամասն տրվել է այն մեթոդաբանության ալգորիթմը, որի օգնությամբ հնարավոր է ՀՀ DSGE մոդելը ներկայացնել SVAR մոդելի տեսքով: Կիրառելով կառուցված SVAR մոդելը՝ իրականացվում են մոդելի մեջ մտնող բոլոր փոփոխականների հետագծերի կանխատեսումները: Ընդ որում նշենք, որ SVAR մոդելով իրականացված կանխատեսումները հիմնականում համընկնում են Ա. Մկրտչյանի կողմից ստացված արդյունքների հետ: Միաժամանակ, դիտարկվել են իրական ՀՆԱ ճեղքվածքի ձևավորման վրա ազդող տարբեր գործոնների ազդեցությունները և իրական ՀՆԱ-ի 1% ճեղքվածքի փոփոխության ազդեցությունը գնաճի փոփոխության վրա: Այդ առումով՝ իրական ՀՆԱ-ի հավասարման մեջ մտնող փոփոխականներին առանձին - առանձին տրվել են այնպիսի արժեքներով տատանումներ, որ ապահովվի ՀՆԱ-ի 1% ճեղքվածք: Ընդ որում՝ հաշվարկները կատարվել են ինչպես մոդելի սկզբնական պայմանների շեղումների, այնպես էլ ընթացիկ ժամանակաշրջանի տատանումների պարագաներում: Այդ ազդեցությունը բնութագրելու համար հիմք է ընդունվել գնաճի կուտակային փոփոխության և իրական ՀՆԱ-ի կուտակային փոփոխության հարաբերության գործակիցը:

Այսպիսով՝ ՀՀ DSGE մոդելի ներկայացումը SVAR տեսքով կարող է կիրառվել կանխատեսումների, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության վերլուծությունների նպատակով: Կիրառելով SVAR մոդելը՝ յուրաքանչյուր եռամսյակ, նոր վիճակագրական տեղեկատվության ստացման հետ միաժամանակ, մոդելում ներառվող բոլոր ժամանակային շարքերը վերանայվում են: Այնուհետև կիրառելով այդ ժամանակային շարքերը՝ ցանցային որոնումների եղանակով ճշգրտում ենք ՀՀ DSGE մոդելի տարրերը և ապա այն ներկայացնում SVAR մոդելի տեսքով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ball L. Mankiw N.G., Romer D. '' New Keynesian Economics and the Output-Inflation Trade-off'' Brookings Papers on Economic Activity, 1988.
2. A.Berg, P. Karam and D. Laxton "A Practical Model-Based Approach to Monetary Policy Analysis-Overview", IMF, WP/06/80.
3. Binder, Michael and M. hashem Pesaran, 1997 "Mulyivariate linear rational expectations models: Characterization of the nature of the solutions and their full recursive computation" Econometric theory, 13, 877 – 888.
4. Blanchard, Olivier J., and C.M. Kahn, 1980, "The solution of linear difference models under rational expectations" Econometrica 48, 1305 – 1311.
5. Clarida, R., J. Gali and M. Gertler (1999). "The Science of Monetary Policy: A New Keynesian Perspective," Journal of Economic Literature, Vol. 37, No. 4, pp.1661-1707.
6. Cho S., Moreno A., (2006). "A small sample study of the New Keynesian macro model", Journal of Money Credit and banking 38, 1462 – 1482.
7. Fanelli, L. (2008), "Estimation of a New Keynesian Phillips curve through VAR models: Results from Euro area, Oxford Bulletin of Economics and Statistics 70, 53-66.
8. Ireland, P.N. (2004), "A method for taking models to the data", Journal of economics dynamics and control 28, 1205-1226.
9. Gali and Tommaso Monacelli (2002), "Monetary Policy and Exchange Rate Volatility in a Small Open Economy" NBER Working paper No 8905, pp.1-43.
10. Liu Phillip (2006), "A small New Keynesian model of the New Zealand economy", Rezerve bank of New Zealand DP2006/03.
11. Mkrtychan A., Era Dabla-Norris and Stepanyan A.(2009), "A New Keynesian model for Armenian Economy". IMF wp/09/66.
12. O. Vasicek and K. Musil (2006), "Behavior of the Czech Economy: New open economy macroeconomics DSGe model". Research center for competitivness of Czech republic. Working Paper No. 23/2006.
13. Smets, F. and R. Wouters (2003), An estimated dynamic stochastic general equilibrium model of the Euro area, Journal of the European Economic Association, 1, 1123-1175.
14. Sungbae A., Schorfheide F. "Bayesian Analysis of DSGE Models". NBER working paper 2006.
15. Uhlig Herald (1997), "A toolkit for analyzing nonlinear dynamic stochastic models easily in Ramon marimon and Andrew Scott, Ed., Computational methods for the study of dynamic economies, Oxford University Press, pp. 30-61.
16. Walsh C. (2003), "Monetary Theory and Policy", MIT Press, Cambridge MA, second edition.

1. Սպառման հավասարում՝

$$c_t = hc_{t-1} - \frac{1-h}{\sigma} r_t + y^*_{t+1} - hy^*_t + \frac{1-h}{\sigma}\beta_s q_{t-1} + \frac{1-h}{\sigma}\beta_s q_{t+1} + \frac{1-h}{\sigma}\xi_{t+1} + \varepsilon^c_t$$

2. Իրական ՀՆԱ-ի հավասարում՝

$$y_t = (k_1 + k_2)c_t + d_1 q_t - d_2 \psi_t + (1 - k_1 - k_2 - k_3)y^*_t + k_3 gov_t + \varepsilon^y_t$$

որտեղ՝

$$d_1 = \left[k_1 a \frac{\gamma}{1-\gamma} - k_2 a + (1 - k_1 - k_2 - k_3)\frac{a^*}{1-\gamma} \right]$$

$$d_2 = \left[k_1 a \frac{\gamma}{1-\gamma} - k_2 a + (1 - k_1 - k_2 - k_3)a^* \frac{\gamma}{1-\gamma} \right]$$

3. Ներմուծված ապրանքների գների աճի հավասարում՝

$$\pi_{m,t} = \beta_m \pi_{m,t-1} + (1-\beta_m)\beta\pi_{m,t+1} + (1-\beta_m)\frac{((1-\omega_f)(1-\omega_f\beta))}{\omega_f} \times$$

$$\left[\frac{\gamma_\psi \sigma(c_t - c_{t-1})}{1-h} + \gamma_\psi \eta y_t + \frac{\gamma_\psi \gamma q_t}{1-\gamma} - \frac{\gamma_\psi \gamma \psi_t}{(1-\gamma)} - \gamma_\psi(1+\eta)z_t - \frac{\gamma_\psi q_t}{(1-\gamma)} + \frac{(1-\gamma_\psi\gamma)\psi_t}{(1-\gamma)} \right] + \varepsilon^{\pi_m}_t$$

1. Տեղական ապրանքների գների աճի հավասարում՝

$$\pi_{h,t} = \beta_h \pi_{h,t-1} + (1-\beta_h)\beta\pi_{h,t+1} + (1-\beta_h)\frac{((1-\omega_h)(1-\omega_h\beta))}{\omega_h} \times$$

$$\left[\frac{\sigma(c_t - c_{t-1})}{1-h} + \eta\hat{y}_t + \frac{\gamma q_t}{1-\gamma} - \frac{\gamma\psi_t}{(1-\gamma)} - (1+\eta)z_t \right] + \varepsilon^{\pi_h}_t$$

2. Իրական փոխարժեքի հավասարում՝

$$q_t = \beta_q q_{t-1} + (1-\beta_q)E_t q_{t+1} - r_t + r^*_t - \xi_t + \xi_{t+1} + \varepsilon^q_t$$

3. Դրամավարկային քաղաքականության կանոն՝

$$i_t = \beta_i i_{t-1} + (1-\beta_i)0.7\pi^h_t + (1-\beta_i)0.7\pi^m_t + \varepsilon^i_t$$

4. Նույնություններ՝

$$\Delta\psi_t = \Delta s_t + \pi^*_t - \pi^m_t$$

$$\Delta s_t = q_t - q_{t-1} - \pi^*_t + \pi_t$$

$$\pi_t = (1-\gamma)\pi^h_t + \gamma\pi^m_t$$

$$r_t = i_t - \pi_{t+1}$$

$$r^*_t = i^*_t - \pi^*_{t+1}$$

5. Արտածին (էկզոգեն) փոփոխականների հավասարումներ՝

$$y_t^* = \rho_{y^*} y_{t-1}^* + \varepsilon_t^{y^*}$$

$$\pi_t^* = \rho_{\pi^*} \pi_{t-1}^* + \varepsilon_t^{\pi^*}$$

$$i_t^* = \rho_{i^*} i_{t-1}^* + \varepsilon_t^{i^*}$$

$$\xi_t = \rho_{\xi} \xi_{t-1} + \varepsilon_t^{\xi}$$

$$gov_t = \rho_{gov} gov_{t-1} + \varepsilon_t^{gov}$$

$$z_t = \rho_z z_{t-1} + \varepsilon_t^{z}$$

Մոդելի ներծին (էնդոգեն) փոփոխականները.

1. y_t - իրական ՀՆԱ-ի՝ լոգարիթմված սեզոնային հարթեցված շարքի և դրա տրենդի շեղումն է,
2. c_t - մասնավոր իրական սպառման՝ լոգարիթմված սեզոնային հարթեցված շարքի և դրա տրենդի շեղումն է,
3. π_t^m - ներմուծված ապրանքների գների ինդեքսի՝ լոգարիթմված և սեզոնային հարթեցված շարքի առաջին կարգի տարբերության և դրա տրենդի շեղումն է,
4. π_t^h - տնտեսության ներսում արտադրված ապրանքների գների ինդեքսի՝ լոգարիթմված և սեզոնային հարթեցված շարքի առաջին կարգի տարբերության և դրա տրենդի շեղումն է,
5. q_t - իրական փոխարժեքի՝ լոգարիթմված սեզոնային հարթեցված շարքի և դրա տրենդի շեղումն է,
6. ψ_t – մեկ գնի օրենքից շեղում, որը լոգարիթմված և սեզոնային հարթեցված շարք է,
7. Δs_t - անվանական փոխարժեքի՝ լոգարիթմված շարքի առաջին կարգի տարբերությունն է,
8. i_t - միջբանկային շուկայի ռեպո անվանական տոկոսադրույքի շարքի և դրա տրենդի շեղումն է,
9. r_t - միջբանկային շուկայի ռեպո իրական տոկոսադրույքի շարքի և դրա տրենդի շեղումն է:

Մոդելի արտածին (էկզոգեն) փոփոխականները.

1. gov_t - կառավարության ծախսումների՝ լոգարիթմված սեզոնային հարթեցված շարքի և դրա տրենդի շեղումն է,
2. ξ_t - մասնավոր տրանսֆերտների՝ լոգարիթմված սեզոնային հարթեցված շարքի և դրա տրենդի շեղումն է,
3. y^*_t - արտերկրի իրական ՀՆԱ-ի՝ լոգարիթմված սեզոնային հարթեցված շարքի և դրա տրենդի շեղումն է,
4. π_t^* - ԱՄՆ և Եվրոմիության սպառողական գների՝ լոգարիթմված և սեզոնային հարթեցված շարքի առաջին կարգի տարբերության և դրա տրենդի շեղումն է,
5. i_t^* - ԱՄՆ դաշնային պահուստային բանկի դիսկոնտային անվանական տոկոսադրույքի և Եվրոմիության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման անվանական տոկոսադրույքների միջին ցուցանիշի շարքի և դրա տրենդի շեղումն է,
6. r_t^* - ԱՄՆ դաշնային պահուստային բանկի դիսկոնտային իրական տոկոսադրույքի և Եվրոմիության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման իրական տոկոսադրույքների միջին ցուցանիշի շարքի և դրա տրենդի շեղումն է,
7. z_t - Արտադրողականության՝ լոգարիթմված սեզոնային հարթեցված շարքի և դրա տրենդի շեղումն է,
8. ε_t – հավասարումներում ընդգրկված սխալներն են:

Մոդելի կառուցվածքային տարրերը.

h - սպառման իներցիան և սովորույթները ներառող գործոն,

β - դիսկոնտավորման գործակից,

ω_h – գները չճշգրտող տեղական արտադրողների տեսակարար կշիռ,

ω_f – գները չճշգրտող ներմուծողների տեսակարար կշիռ,

γ_ψ - ներմուծված ապրանքների վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռ ընդհանուր ծախսերում,

σ - սպառման միջժամանակային փոխարինման առաձգականության հակադարձ մեծություն,

k_1 - ներքին ապրանքների սպառման տեսակարար կշիռ համախառն պահանջարկում,

k_2 - ներմուծված ապրանքների վաճառքի հետ կապված՝ ներքին ծառայությունների նկատմամբ պահանջարկի տեսակարար կշիռ համախառն պահանջարկում,

k_3 - կառավարության ծախսումների տեսակարար կշիռ համախառն պահանջարկում,

η - աշխատավարձի փոփոխությունից կախված՝ աշխատուժի առաջարկի առաձգականության հակադարձ մեծություն,

a - տնտեսության ներսում արտադրված և ներմուծված սպառման ապրանքների միջև փոխարինման առաձգականություն,


a^* - արտերկրի տնային տնտեսությունների կողմից այնտեղ արտադրված ապրանքների և ներմուծված ապրանքների նկատմամբ պահանջարկների փոխարինման առաձգականություն,

γ - տնտեսության բացվածության աստիճան (ընդհանուր սպառման մեջ ներմուծված ապրանքների սպառման տեսակարար կշիռ),


β_h, β_m, β_q, β_i – ներծին փոփոխականների լագային մեծությունների համապատասխան գործակիցներ՝ տնտեսության ներսում արտադրվող ապրանքների, ներմուծված ապրանքների գների աճի, իրական փոխարժեքի որոշման՝ իրական տոկոսադրույքի չծածկված համարժեքության (պարիտետի), դրամավարկային քաղաքականության կանոնի հավասարումներում,

ρ_{π^*}, ρ_{y^*}, ρ_{i^*}, ρ_z, ρ_ξ, ρ_{gov} - կառավարության կատարած ծախսումների, մասնավոր տրանսֆերտների, ներքին արտադրողականության, ինչպես նաև արտերկրի թողարկման, գնաճի, անվանական տոկոսադրույքի վարքերը բնութագրող առաջին կարգի ավտոռեգրեսիոն գործակիցներ:


Գծանկար 1. Ներքին արտադրության ապրանքների գների 1% փոփոխություն




Գծանկար 2. Ներմուծված ապրանքների գների 1% փոփոխություն




Գծանկար 3. Արտադրողականության 1% փոփոխություն




Գծանկար 4. Արտերկրից ստացվող մասնավոր տրանսֆերտների 1% փոփոխություն



Գծանկար 5. Այլ երկրների իրական ՀՆԱ-ի 1% փոփոխություն



Գծանկար 6. Տոկոսադրույքի 1% փոփոխություն



© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2010